№ 83 ԿԻՐԱԿԻ 20 ԱՊՐԻԼԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ 20 ԱՊՐԻԼԻ № 83

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 7 ՌՈՒԲ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խընդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

1914 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 Թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրձինի:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՄՆԱՑԱԿԱՆ ԵԳՕՐՕՎԻՉ ՓՐԻԴՕՆԵԱՆԸ յայտնում է, որ կիրակի, ապրիլի 20-ին

ԳՐԻԳՈՐ ԵԳՕՐՕՎԻՉ
ՓՐԻԴՕՆԵԱՆԻ

մահվան տարելիցին, Նորաշէնի ս. Աստուածածնի եկեղեցում կը մատուցվի պատարագ և կը կատարվի հոգեհանգիստ: Պատարագի սկիզբը առ. ժամը 10½-ին, իսկ հոգեհանգստինը՝ ցերեկվայ ժամը 12-ին: 348. 2—2

ՆԿԱՐԻՉ
Ա. ՖԷԹՎԱՃԵԱՆԻ
ԱՆԻԻ ԱԼԲՈՄԸ
◆ գունաւոր ◆

Լոյս տեսած Վիէննայի Գռաֆիշէ Քունստ Ինդուստրի Կայսերական Ընկերութեան տպարանում:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է Թիֆլիսում մեծաքանակ—Մաթինեանցի խանութում (Մադաթեան կղզի). իսկ հատով—«Բլան է Նուար» խանութում և «Գուտենբերգ» գրավաճառանոցում: Գինը—հատով՝ 1 ր. 20 կ., մեծաքանակ գնողներին զեղչ 20%.

(կ.) առ. 122. 25—11

ԲԺԻՇԿ
Մ. Կ. ՄԱՐՈՒԲԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ
Սիֆիլիս, վեներական եւ կաշուի հիւանդութիւնների:
Սրսկումն «606»-ի և «914»-ի:
Ընդունելութիւն (առ. ժ. 1—2
(երկ. ժ. 5—8
Ելիզաւետինսկայա փ. № 39. տ. Ջաղէթեանի:
Տելեֆոն № 9—17.
(չ.ու.կ.) առ. 901. 100—64

ՊԱՏԿԱՌԵԼԻ ՅՈԲԵԼԵԱՆ

Այսօր Կովկասի Կայսերական Բժշկական Ընկերութիւնը տօնում է իր հիմնարկութեան և գործունէութեան 50-ամեակի յօբելեանը:

Գիտնական ընկերութիւններ Կովկասում մենք շատ քիչ ունենք, իսկ այնպիսի պատկառելի հասակ ունեցող գիտնական ընկերութիւն, որպիսին հանդիսանում է Բժշկականը, հազուագիւտ է, մատով կարելի է ցոյց տալ. բացի յօբելեար Բժշկական Ընկերութիւնից կան միայն երկուսը՝ Գիւղատնտեսական և Աշխարհագրական Ընկերութիւնները:

Ամբողջ յիսուն տարիներ գործել է Բժշկական Ընկերութիւնը Կովկասի համար. գործել է որքան կարողացել է, որքան թոյլատրել են իր ույժերը և պայմանները: Իսկ պայմանները մի գիտնական ընկերութեան համար, չը մոռանանք, շատ աննպաստ էին նոյն իսկ 10—15 տարի առաջ: Շնորհիւ այդ աննպաստ պայմանների Ընկերութիւնը չը կարողացաւ այնքան լայն և ազատօրէն զարգանալ, տարածել իր թևերը, ինչպէս զարգանում և բարգաւաճում են եւրոպական այն գիտնական ընկերութիւնները, որոնց գործունէութիւնը սերտ կերպով կապված է ժողովրդի հետ: Իսկ բոլոր մասնագիտական-գիտնական ընկերութիւնների մէջ բժշկականը ամենից շատ շօշափման և մերձեցման կէտեր ունի ժողովրդի հետ:

Եւ ահա այդ ձգտումը՝ մօտենալ ժողովրդին, գիտութեան բարիքներին հաղորդակից անել ժողովուրդը—ձգտում, որով համակվեց Բժշկական Ընկերութիւնը այն օրից, երբ հնարաւորութիւն ստացաւ փոքր ի շատէ ազատ շունչ քաշել, և դրանով մօտ կանգնեց ժողովրդին—ամենից շատ գնահատելին է նրա գործունէութեան մէջ, իբրև հասարակական-գիտնական գործունէութիւն: Նա սկսեց հրատարակել ժողովրդական բրօշիւրներ ոչ միայն ռուսերէն, այլ և տեղական լեզուներով. նա կազմակերպեց դասախօսութիւններ տեղական լեզուներով: Սրանով մենք բնաւ չենք ուրանում և նրա զուտ գիտնական արժանիքը և գիտութեանը մատուցած ծառայութիւնները Կովկասին վերաբերեալ շատ բժշկական-առողջապահական պայմանների ուսումնասիրութեան նկատմամբ:

Կովկասեան Բժշկական Ընկերութեան մի այլ արժանիքը կայանում է նրա մէջ, որ նա մեծապէս նպաստեց հասարակական բժշկականութեան, առողջապահութեան, զեմստվային բժշկականութեան կազմակերպութեան գործին:

Ողջունում ենք պատկառելի գիտնական Ընկերութեան պատկառելի յօբելեանը և մաղթում, որ նրա գործունէութիւնը յօգուտ մեր երկրի և ժողովրդի այսուհետև աւելի ևս լայնանայ և փարթամ պտուղներ տայ:

Հ. Առաքելեան

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ
Ա. եԱ. Մ. ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԴԱՐՁԱԿ ՄԻՋՈՑՆԵՐ, ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ և ԶՈՒԱՐՃՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՊԻԱՏԻԳՕՐՍԿ.—Սէզօնը մայիսի 1-ից մինչև սեպտեմբերի 15-ը: ԾԾՄԲԱՅԻՆ ՋՐԵՐ յօդացաւի, սիֆիլիսի, կաթուածի, կանացի և այլ հիւանդութիւնների դէմ: ԵՍԵՆՏՈՒԿԻ.—Սէզօնը մայիսի 10-ից մինչև սեպտեմբերի 10-ը: ԱԼԿԱԼԵԱՆ ՋՐԵՐ մարսողութեան խանգարման, ստամոքսացաւի և աղիքացաւի, լեարդային հիւանդութիւնների և այլոց դէմ: ԺԵԼԵԶՆՈՎՈԴՍԿ.—Սէզօնը մայիսի 15-ից մինչև սեպտեմբերի 1-ը: ՀՈՂԱՅԻՆ ՋՐԵՐ արեան պակասութեան, կանանց զանազան հիւանդութիւնների, երիկամունքային և լեարդային հիւ. դէմ և այլն: ԿԻՍԼՈՎՈԴՍԿ.—Սէզօնը յունիսի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը: ԱԾԽԱԹԹՈՒՏԱՅԻՆ ՋՐԵՐ ուժասպառութեան, ստամոքսային մի քանի հիւանդութիւնների, ջղային, կանացի և այլ հիւանդութիւնների դէմ:

Ջրեր՝ վաննաների եւ խմելու համար, գիդրոպատիկ հիմնարկութիւններ, ցեխաբուժութիւն, բժշկութիւն ինգալեացիաներով, Նարզանի ածխաթթուտային գազով. կումիս, կէֆիր, մասսաժ, էլեկտր. և լուսաբուժութիւն, արեգակնային վաններ, բժշկական մարմնամարզութիւն ըստ Ցանդէրի, ռէնդգէնօսկոպիա և ռէնդգէնոթերապիա, բաղնիք: Զանազան մասնագէտ-բժիշկներ (մօտ 800): Եկւորները 40,000 հոգուց աւելի են: Էլեկտրաքարշ և լուսաւորութիւն, սանատորիաներ, բուժարաններ, հիւրանոցներ, կաֆէներ, ճաշարաններ, ընթերցարաններ, ճեմելիքներ, ծաղկանոցներ, հրապարակներ՝ մանկական խաղերի համար, զբօսանքներ, լեռնային էկսկուրսիաներ, թատրոններ, սիմֆոնիական երաժշտախմբեր: Մանրամասն տեղեկութիւնները ուղեցոյց-գրքի և յատուկ բրօշիւրների մէջ:

Տեղեկութիւնների համար դիմել՝ въ Управленіе водъ въ Пятигорскѣ. (կ.) առ. 333. 3—1

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
Կիրակի, ապրիլի 20-ին
Մի խումբ Թատերասէրներ, մասնակցութեամբ դեր.-դերասանուհիների, կը ներկայացնեն
Առաջին անգամ Բ. ԱՑՎԱԶԵԱՆԻ ինքնուրոյն, կեանքից վերցրած պիէսը՝
„ԽԵԼԱԳԱՐԸ"
Դրամա 3 գործ.
349. Սկիզբը երեկոյեան ժամը 8½-ին ◆ Տեղերի գները 2 ռուբլուց մինչև 30 կ.

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Երեքշաբթի, ապրիլի 22-ին
ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
Ի նպաստ
վաստակաւոր դերասան Մ. ԱՂԱՅԵԱՆԻ XXXV-ամեայ բեմական գործունէութեան
Հայ դերասանական ընկերակցութիւնը, բարեհաճ մասնակցութեամբ վրաց յայտնի դերասան
Վ. ԱԲԱՇԻՁԷԻ
կը ներկայացնէ
I
ՈՍԿՐԱԳՈՐԾԻ ԸՆՏԱՆԻՔԸ
Հեղ. Ջիակօմէտտի, 2-րդ գործողութիւնը
II
ԱՒԱԶԱԿՆԵՐ
Շիլլէրի, վերջին գործ.
III
ԶԱՒԵՇՏ
IV
ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ
Սկիզբը երեկ. ժամը 8½-ին (ա.օ.) առ. 350. 2—1

Այսօր, կիրակի, ապրիլի 20-ին, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԼՈՒԲԻ
ամառային շինութեան մէջ (Միխայլովսկի պր., № 65, տուն բժ. Կարապետեանի)
ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ
ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԶԲՕՍԱՆՔ
ՅՕԳՈՒՏ ԹԱՆԴՕՅԵԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

Հետևեալ ծրագրով. մանկական խաղեր, խմբերգ, պտի-շվօ, օղակախաղ, տոմբօլա, ամերիկեան բազար, բաղդի բանալի, կօնֆէտտի, ծաղիկներ: Բուֆէտ՝ զովացուցիչ ըմպելիքներով: Այգում կը նուագեն զինուորական և ասիական երաժշտախմբեր: Այգին գեղեցիկ զարդարված կը լինի: ՊԱՐԵՐ: Մուտքի տոմսակը՝ մեծերի համար 25 կ., երեխաների համար—15 կ.: Եղանակը վատ լինելու դէպքում զբօսանքը կը յետաձգվի: Սկիզբը ցեր. ժամը 4-ին: Երեխաները այգին մտնելու ժամանակ ձրիաբար կը ստանան դրօշակներ.
առ. 354. 1—1

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ
(Ասսիստենտ Բերլինի պրօֆ. Պօզների)
վերադառնալով արտասահմանից, ներկայ տարվայ մայիս ամսից կը վերանորոգէ հիւանդների ընդունելութիւնը ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ:
(կ. հ.) առ. 104. 50—21

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ԼԱԼԱՅԵԱՆՑ
Ասիստենտ պրօֆ. Իօզէֆի.
Ընդունում է նաև մասնագէտ պրօֆես. համախորհուրդ կազմելու:
Հասցէն՝ Berlin. Karlstr. 33. amt. norden 6062.
առ. (հ. կ.) 355. 6—1

ՑԻՐԿ
Ֆ. ԻՒՊԱՏՕՎԻ

Այսօր, կիրակի, ապրիլի 20-ին, տեղի կունենայ 2 ներկայացում: Երեկոյեան խոշոր ներկայացում մասնակցութեամբ ցիրկային աշխարհի ամենալաւ արտիստների: Այսօր կը մասնակցեն նաև՝ պ. պ. Րօզէտտինները, որոնց մասին խօսում է ամբողջ Թիֆլիսը, սալօնային ժօնգլէրներ Կանկօվսկի ընտանիքը, որ բաղդ է ունեցել խաղալու Բարձրագոյն անձերի ներկայութեամբ, հռչակաւոր ակրօբատներ Րօսսինի ընտանիքը, որ կը կատարէ խիստ դժուարին սալտո-մօրտալներ: Այսօր երեկոյեան գեղեցկուհի Ելենա Իւպատովան հանդէս կը բերէ զարմանալի մարզված ձիերից մէկը: Այսօր երեկոյեան կախարդական բալէտ: Հասարակութեանը յարմարութիւն տալու համար, ցիրկի կասսան այսօր բաց կը լինի ցեր. ժամը 2-ից: Այսօր ցերեկով մանկական մեծ ներկայացում, մասնակցութեամբ պ. պ. Րօսսինիների, Րօզէտտիների, Կանկօվսկիների և այլոց: Երեխաները կարող են ձրիաբար զբօսնել՝ հեծնելով ցիրկի փոքրիկ ձին (պօնի): Ցերեկ. ներկ. տոմսակները էժանացված են: Ցերեկ. ներկ. սկիզբը ժամը 2-ին: Ցիրկի վարչութիւնը հրաւիրում է բոլոր ապաստարանների երեխաներին գալ ցերեկվայ ներկայացման ձրիաբար:

Ցիրկի վերատեսուչ՝ Ֆ. Իւպատով
Կառավարիչ՝ Լ. Խուընդաձէ
առ. 352. 1—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչեվսկայա 13, տելեֆոն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով:
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.:

Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Ջակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Պ. Ճահպարոնեանց
(հ.կ.) առ. 868. 100—47

ԿԱՐՍՈՒՄ
ԲԺԻՇԿ
Լ. Գ. Տէր-Գրիգորեանց
Մասնագէտ կանացի և վեներական հիւանդութիւնների, Միխայլովսկայա փող. տուն Շավաէրցեանի, նոտարի գրասենեակի մօտ:
ԸՆԴՈՒՆՈՒՄ է երեկ. ժամը 5—6-ը:
(կ. հ.) առ. 299. 10—4

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՔԻՒՐԴԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՇԱՐԺԱՌԻԹԸ ԵՒ ՆՊԱՏԱԿԸ

Մեր ապրիլի 2-ին գրված և «Մշակի» ապրիլի 12-ի № 76-ում տպված յօդուածում մենք բնորոշել էինք քիւրդական շարժումը ոչ որպէս հայերի կոտորածի նախօրեակ, այլ որպէս ապստամբութիւն:

Բայց որոնք են ապստամբութեան շարժառիթները և նպատակը, շատ համառօտ կերպով և կարճ յօդուածում աշխատենք բացատրել՝ լրագիրներում տրված տեղեկութեանց հիման վրա և ըստ մեր համեստ ըմբռնողութեան:

Առաջին անգամն ենք հանդիպում, որ օսմանեան կանոնաւոր զօրքերի շարքում մասնակցէին և քիւրդերը իբրև կանոնաւոր զինուորներ, այն էլ Փոքր-Ասիայից դուրս և ստուար թւով, ինչպէս այդ գործածեց Թիւրք կառավարութիւնը իր վերջին պատերազմում՝ բալկանեան դաշնակցութեան դէմ. այդ հանգամանքը ներշնչեց քիւրդերին և անբաւականութիւն կառավարութեան դէմ և իրանց ներքին զօրութեան զգացումն:

Առաջին անգամն էր, որ կառավարութիւնը սկսեց խստիւ հետապնդել քիւրդ հրոսակապետներին և սրի քաշել և նրանց իւրդն (օջախը) իսկ կործանել:

Առաջին անգամն է, երբ կառավարութիւնը նորանոր հարկերի ենթարկեց քիւրդերին և ամենայն խստութեամբ ձեռնամուխ եղաւ գանձելու:

Վերջապէս այս անգամ է, երբ կառավարութիւնը, Ռուսաստանի հետ (իբրև մեծ պետութեանց ներկայացուցչի) կապած դաշանց հիման վրա, համիդիէի զէնքերը ձեռքներից առաւ և դրեց պետական զինարանը և միմիայն զօրախաղի ու մօբիլիզացիայի ժամանակ պէտք է տայ քիւրդական այդ 60,000-անոց զօրքին իր զէնքերը, և հայերին խոստացաւ հաւասար քիւրդերին զէնք տալ հարկաւոր եղած դէպքերում:

Թէ ինչու Թիւրքիայի կառավարութիւնը այսպիսով լծի տակ քաշեց քիւրդերին, մենք ըմբռնում ենք երկու իմաստով. մէկ որ, եւրոպական մասերը կորցնելուց յետոյ, նա սթափվեց—ինչպէս միշտ լինում է այդպիսի դէպքերում—և կամեցաւ խիստ կարգապահութեան (դիսցիպլինայի) ենթարկել ասիական մասը և մնացած ժողովուրդներին կռել-կոփել իր զօրաւոր ձեռքի տակ, մանաւանդ իսլամ ցեղերին, որպէսզի աւելի կուռ կերպով յարվեն պետականութեանը: Երկրորդ, որ կառավարութեանը վաղուց ծանօթ էին քիւրդերի մէջ մտած խլրտումները, ուստի կամեցաւ վերջ տալ իր enfant gaté—չարաճճի զաւակների խաղերին, մանաւանդ որ այդ խաղերը կարող էին, այժմեան քաղաքական հանգամանքներում, գրաւել մեծ պետութեանց «բարեհաճ» ուշադրութիւնը և...

Նկարագրած շարժառիթները միայն սաստկացրին և սուր կերպարանք տուին այն ձգտումներին, որոնք ի վաղուց անտի կային քիւրդ ցեղերի մէջ. մեզ յայտնի 50—60 թւականների Բեդրխան-բէյի ապստամբութիւնը, Ջալալ-էդդինի և կամ շէյխ Իբադուլլայի և այլոց ռազմական շարժումները մասնաւոր երևոյթներ էին այն ընդհանուր ոգու, որ դարերից ի վեր կար և պահվում էր քիւրդ աշիրէթապետների՝ բէյերի թէ շէյխերի (աշխարհական թէ հոգևորական) մէջ, որով նրանք միշտ ձգտում էին ազատ լինել պետական ճնշումներից և, թէև թիւրք կառավարութեան թևի տակ, վայելել անձնական և աշիրէթական ազատութիւն:

Եւ այդ հողի վրա պատմական ընթացքում յարատեւաբար ծագում էին անբաւականութիւններ և զինեալ ընդհարումներ միշտ, երբ կառավարութիւնը ձեռնամուխ էր լինում պետականութեան ընդհանուր պահանջներին ենթարկել նրանց:

Բայց, վերջապէս, ինչպէս նախկին մեր յօդուածներումն էլ ակնարկել ենք, քիւրդերի մէջ վերջին երկու-երեք տասնեակ տարիներում երևացին և մտաւորականներ, որոնք երազեցին քաղաքական միութիւն, ազգայնութեան զգացմունք մտցնել իրանց ցեղակիցների մէջ և տեսականից իջան գործնականի:

Եւ մեր թւահամարած շարժառիթներին այժմ ահա կցենք մի մեծ շարժառիթ ևս, այն է քիւրդութեան և Քիւրդստանի գաղափարները (ոչ պետական անկախութեան մտքով), որպիսի գաղափարներին ույժ տուեց հայկական հարցը, դեռ տարիներ առաջ, իսկ վերջնականապէս այս տարվայ յունվարից դէսը՝ հայկական նահանգների բարենորոգման դաշանց ստորագրելը:

Ինչպէս թէ,—մտածեցին քիւրդ կրթեալները կամ, ասենք, իդէօլօգները,—լինի Հայաստան, չը լինի Քիւրդստան, և Հայաստանը կլանի Քիւրդստանին և հայերը մեր վրա բէյութիւն անեն. դէհ, մենք էլ կը պահանջենք քիւրդութիւն, Քիւրդստան:

Անշուշտ Թիւրքերը մինչ այդ աստիճան աչքաբաց չէին համարում քիւրդերին, երբ դեռ մի քանի տարի առաջ՝ Հայաստանի դէմ՝ առաջ էին քաշում և հոլովում Քիւրդստանը...

Բայց մենք դառնանք մի քանի խօսքով դէպի մեր հայկական հարցը և հայկական տենչանքները. այստեղ մենք կը տեսնենք, որ ինչպէս տեսաւ համայն աշխարհը, ինչպէս եղանակ (տոն) տուեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ինչպէս հազարերանգ արձագանքեց նոր հայութեան նոր Իսրայէլ-Օրի վսեմափայլ Նուպար փաշան և վերջապէս՝

ինչպէս կնքեց իր բարենորոգման դաշինքը Ռուսիայի Մեծ Գահակալի մինիստր Սազօնովը Թիւրք կառավարութեան հետ, հայութեան տենչանքը բարենորոգումներից, իսկական ռեֆօրմներից դէնը չէ անցնում։ Չը կայ այստեղ ոչ անջատողականութիւն, ոչ նոյնիսկ ինքնավարութիւն և ոչ մանաւանդ պետութիւն կամ անկախութիւն։ Ահա այս է հայութեան տենչանքը և, աւելացնեմ, իմ անհատականը։

Այժմ եկանք հասանք այն կէտին, որի պատճառով և գրիչ վերցրինք գրելու այս յօդուածը։ Առիթը մեզ տուեց «Մշակի» № 80-ի առաջնորդող յօդուածի յատկապէս հետևեալ տողերը. «Այլ խօսքերով՝ քիւրդ կրթեալ ցեղապետների ձգտումն է ստեղծել աւտօնօմ, ինքնավար Քիւրդստան»։ «Բայց քիւրդական հարցը, քիւրդական աւտօնօմիան, անկախ Քիւրդստանի հարցը...»։ «Դրա համաձայն և պէտք է որոշվի մեր վերաբերմունքը դէպի քիւրդական հարցը, դէպի աւտօնոմ Քիւրդստանը։ Այդ անհրաժեշտ է մանաւանդ այն պատճառով, որ վերջերս մի քանի քիւրդ ցեղապետների կողմից առաջարկվում է քիւրդ-հայկական միութիւն՝ Թիւրքիայում քիւրդ-հայկական պետութիւն հիմնելու նպատակով»։

Արտագրածս տողերի մէջ ես ընդգծեցի՝ «անկախ Քիւրդստանի հարցը» և «առաջարկվում էր քիւրդ-հայկական միութիւն՝ Թիւրքիայում քիւրդ հայկական պետութիւն հիմնելու նպատակով». ընդգծեցի, որովհետև իմ այսօրվայ գլխաւոր նպատակն է խօսել դրա մասին։

Որքան ես եմ հասկանում իրերի դրութիւնը, այդ ոճերը (անկախ, քիւրդ-հայկական պետութիւն) չեն համապատասխանում կեանքի իրականութեանը. մեր կարծիքով, քիւրդերը չեն տենչում ստեղծել ոչ անկախ Քիւրդստան և ոչ մանաւանդ քիւրդ-հայկական պետութիւն։ Մի փոքրիկ ապացոյց բերեմ նոյնիսկ «Մշակի» № 80-ի հայկական հարցի բաժնից։ Ահա. «Թիւրքիայի հայոց պատրիարք Զաւէն արքեպիսկոպոսը և Բիթլիսի առաջնորդ Սուրէն վարդապետը, ի պատասխան Վեհ. Կաթողիկոսի հեռագիրների, զեկուցանում են. թէև սկզբում մեծ երկիւղ և սարսափ է եղել հայերի մէջ, բայց յետոյ իմացվել է, որ քիւրդական շարժումը հայերի դէմ չէ, այլ մի քանի քիւրդ ցեղապետների գործն է, որոնք որոշ իրաւունքներ են պահանջում իրանց համար Թիւրքաց կառավարութիւնից։ Բիթլիսի Թիւրքերի մի մասն եւս միացած է եղել քիւրդերի հետ...»։ «Ապստամբ քիւրդերի պարագլուխ ծերուկ մօլլա Սէլիմը, յաղթվելով կառավարական զօրքից, փախել ապաստանել է ռուսաց հիւպատոսարանը, խնդրելով ընդունել իրան եւ իր ցեղը ռուսական հպատակութեան մէջ»։ Ես ընդգծեցի այն խօսքերը, որոնք և հակասում են առաջնորդող յօդուածի վերջաբանին։ Եւ, յիրաւի, եթէ ապստամբները «որոշ իրաւունքներ են պահանջում», ապա ուրեմն անկախութիւնը չէ նրանց պահանջը. մանաւանդ որ քիւրդերի հետ միացած են եղել և Թիւրքեր։ Եւ, վերջապէս, եթէ ապստամբ «քիւրդերի պարագլուխ ծերուկ մօլլա Սէլիմը խնդրել է ընդունել իրան եւ իր ցեղակիցներին եւ իր ցեղը ռուսական հպատակութեան մէջ», ուրեմն նրա պահանջը չէ եղել անկախութիւն և ոչ իսկ աւտօնօմիա, այլ կեանքի բարելաւումն, որպիսին նա պատրաստ է գտնել ռուսական հպատակութեան մէջ, եթէ այդ չաջողվեց գտնել Թիւրքական հպատակութեան ներքոյ։

Ես կրկնում եմ, որ քիւրդերի քաղաքական ձգտումները այդքան հեռուն, որպէս է անկախութիւն, պետութիւն և նոյն իսկ, վստահանում ենք ասել, լայն աւտօնօմիա,— այդքան հեռուն չեն գնացել։ Մեր կարծիքով, եթէ հայկական հարցին վերաբերեալ արդէն ստորագրված ռեֆօրմները larga manu կիր առնվեն եօթ վիլայէթներում, դրանով իսկ մեծ չափով բաւարարված կը լինէին և քիւրդերը, իսկապէս նրանց կըրթեալ առաջնորդները։

Եւ եթէ «Մշակի» առաջնորդողի վերջնաբանը բառասխալ չէ, որպէս մենք տրամադիր ենք կարծելու, այլ յիրաւի եղել են «Քիւրդ ցեղապետներ, որոնք առաջարկել են քիւրդ-հայկական միութիւն Թիւրքիայում քիւրդ-հայկական պետութիւն հիմնելու նպատակով», այստեղ մեզ հայերիս երկար մտածելու տեղիք չը կայ, մենք մերժելով պէտք է մերժենք։ Եթէ գոյութիւն ունեն այդպիսի խելառ քիւրդ ցեղապետներ, այդ աղէտաբեր ուտօպիային մենք չենք հետևելու։

Եւ եթէ «Մշակի» № 76-ի մէջ ես քարոզում էի համերաշխութիւն քիւրդերի հետ և ոչ միայն քիւրդերի, այլ և ասօրիների և նոյն իսկ Թիւրքերի, ես մի հատիկ միայն նպատակով էի ասում՝ խաղաղեցնել կեանքը, ստեղծել խաղաղ մթնոլորտ, հեռու ալան-թալանից, հեռու ցեղական ատելութիւնից, հեռու և կառավարութեան դէմ վարած ապստամբական ամեն շարժումներից և... և նպաստել արդէն ստորագրված և շնորհված ռեֆօրմների գործադրութեանը, բայց բարեխղճօրէն և լայն սրտով գործադրութեանը։

Ուրեմն՝ հեռու մեզանից ապստամբ քիւրդ ցեղապետները, հեռու «քիւրդ-հայկական պետութեան» ձգտողները...

Այլ ամենայն սիրով եղբայրական ձեռք կը մեկնենք այն քիւրդ ցեղապետներին, որոնք կը կամենան մեզ հետ միասին ցանկալ և նպաստել ռեֆօրմների կիրառութեանը։ Ձեռք կը մեկնենք նաև այն ասօրիներին և այլ մանր-մունր ցեղերին, լինեն նրանք քրիստոնեայ, թէ մուսուլման, նաև տիրապետող տարրին՝ Թիւրքերին, որոնք անկեղծ սրտով կը փափագեն տեսնել ռեֆօրմները գործադրված։

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

18 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Պետական Դումայում Տեբենինը զեկուցեց, որ ֆինանսական մասնաժողովը ցանկալի է գտել, որպէսզի փետրվարի 28-ի մրրկից վնասված ազգաբնակութեան յատկացվի անտոկոս փոխառութիւն ու 50,000 ր. նպաստ։ Պետական գանձատան դեպարտամենտի տնօրէնը յայտնեց, որ կառավարութիւնը յանձն է առնում մշակելու համապատասխան օրինագիծ, որ կը ներկայացվի հաւանօրէն ամենաուշը մինչև մայիսի վերջը։ Դուման օրինագիծը ցանկալի համարեց։

ԳԱՆՁԱԿ.—Ռուս-պարսկական հանքարդիւնաբերող ընկերութիւնը Հիւսիսային Պարսկաստան ուղարկեց մասնագէտների մի խումբ Ղարադաղի պղնձէ ու արծաթ-արճճէ հանքերը ուսումնասիրելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Մեկնեց զինուորական մինիստրը։

Ճան. հաղորդակցութեան մինիստրը հերթական առաջադրութիւն արաւ մինիստրների խորհրդին՝ յատկացնելու լրացուցիչ 19 միլիօն ռուբլի Ամուրի երկաթուղագծի միջին մասի կառուցման աշխատանքներն աւարտելու համար։

ԿԵՐՉ.—Ուժեղ մրրիկ է։

ՌԻԲԻՆՍԿ.—Վոլգայի վրա ապրիլի 17-ի փոթորկի ժամանակ խեղդվեցին 7 հոգի մի նաւակի շրջվելուց։

ԹԷՕԴՕՍԻԱ.—Ծովային շատ ուժեղ մրրիկ է։

ԵԱԼՏԱ.—Եկաւ արտաքին գործերի մինիստրը։

ՌԻԳԱ.—Մայիսի 1-ի (ն. տ.) առիթով գործադուլ արին ֆաբրիկաների, գործարանների և շատ մանր արհեստանոցների ու 850 նաւահանգստային բանւորները։ Գործարաններից ելնելիս ցոյցեր անելու փորձերը ոստիկանութիւնը խափանեց։ Գործադուլների ընդհանուր թիւը մօտաւորապէս 40,000 է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Ֆաբրիկաներում և գործարաններում, չը նայած առանձնակի ջանքերին գործադուլ անել տալու, աշխատանքներն ընթանում են լիակատար կարգով։

ՎԱՐՇԱՎԱ.—Մայիսի 1-ի առիթով 80 ֆաբրիկաներում գործադուլ արին 11,000 բանւոր։

ՀՌՈՄ.—Այսօր խաղաղ է։ Ֆաբրիկաների և գործարանների մեծ մասը չէ աշխատում։ Էլեկտրաքարշը և կառքերը չեն գործում։ Միջադէպեր չեղան։

ՊԱՐԻԶ.—Մայիսի 1-ն անցաւ Պարիզում և գաւառում հանգիստ։ Տեղի ունեցան սոսկ մի քանի միտինգներ, որոնց ժամանակ ոչ մի միջադէպ չեղաւ։

ՊԵՐՄ.—Դատաստանական պալատը դատապարտեց երեք օդագնացներին առանձին բանտի վեց ամսով, հաշւելով տնային նախնական 1 ամիս ու 18 օր բանտարկութիւնը։ Որոշված է օդապարիկը յանձնել կառավարութեանը, զէնքը՝ ոստիկանութեանը։ Նախագահում էր Զատվօրնիցկին, մեղադրում էր դատախազ Պալց, պաշտպանում էին Կազանի փաստաբաններ Բատը և Գոտլիբը։ Մեղադրեալները բացատրութիւն էին տալիս թարգմանի միջոցով։ Բոլոր երեքին էլ պալատը որոշեց թողնել տնային բանտարկութեան մէջ, մինչև որ իւրաքանչիւրը կը ներկայացնէ 2000 ր. գրաւական։

ԲԵՐԼԻՆ.—«Նորդ-Դոյտշէ-Ալգ.-Ցայտ.»-ի խմբագիր Շվէյցերը զեկուցում կարդաց Սիբիրի և Չինաստանի մասին և մանաւանդ Սիբիրի երկաթուղու կարևորութիւնը տուրիստների համար։ Զեկուցանողի խօսքերով՝ Սիբիրով ճանապարհորդելը խրատական է և հետաքրքրական։ Չինաստանի ապագան պատկանում է Գերմանիային։ Ներկայ էր բազմաթիւ հասարակութիւն։

ՈՒՐՄԻԱ.—Շէյխ Բարզանի կողմնակիցների հետ Թիւրքերը վարվեցին խիստ կերպով, հրդեհելով նրանց բոլոր գիւղերը։ Մէրգէւրկուլի և Գէլի մօտերը երկու կռիւների մէջ ընկան 88 Թիւրք և 18 քիւրդ։

ԱԹԷՆՔ.—Վենիզէլօսը մեկնեց Մակեդօնիա, ուր մնալու է մօտ մի շաբաթ։

Սալօնիկ են եկել ապրիլի 5—14 տասնևչորս շոգենաւով 24,000 փախստական Թրակիայից։

ԴՈՒՐԱՑՑՕ.—Հաղորդում են, որ յոյն զօրքերը հեռացել են Բիգլիստից։

ՊԵԿԻՆ.—«Սպիտակ գայլը» պաշարում է Ցզինչժօուն։

ՏՕԿԻՕ.—Արտաքին գործերի մինիստրի օգնականը բացատրեց, որ Եապօնիան մերժեց պաշտպանել մէկսիկացիների շահերը Միացեալ Պետութիւններում՝ այդտեղ եապօնական հիւպատոսներ չունենալու պատճառով։

ՎԻԵՆՆԱ.—Կայսրի առողջական դրութիւնը լաւանում է։

ԼՕՆԴՕՆ.—Պարլամենտական շրջաններից բղխող լուրերի համաձայն, նացիօնալիստների լիդէր Րէդմօնդը և ուլստէրցիների լիդէր Կարսօնը հրաւէր են ստացել քննել կաբինետի հետ միասին ուլստէրեան հարցի վերաբերմամբ վերջնական համաձայնութեան նախագիծը։

ԲԵՐԼԻՆ.—Րայխստագի բիւջէտային մասնաժողովում զինուորական մինիստրը յայտնեց, որ ներկայումս ոչ մի նոր զինուորական օրինագիծ չէ քննվում։

ԲՈՒԴԱՊԵՇՏ.—Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը կարգադրեց դասաւանդել կրօնը ստորին ու բարձր տարրական դպրոցներում, միջնակարգ քաղաքային ուսումնարաններում և ուսուցչական սեմինարիաներում ուսանողների մայրենի լեզուով։ Այդպիսով կատարվեց կոմս Տիսսայի՝ ռումիններին տրված խոստումը։ Արտօնութիւնը տարածվում է բոլոր ազգութիւնների վրա անխտիր։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

—

Այսօր հայ ուսուցչական և գրական աշխարհի գործիչները, նախաձեռնութեամբ Ներսիսեան դպրոցի մանկավարժական ժողովի, տօնում են ուսուցիչ-մանկավարժ և բանասէր-գրող Իսահակ Յարութիւնեանի մանկավարժական 25-ամեայ և գրական 30-ամեայ գործունէութեան յոբելեանը։

Իսահակ Յարութիւնեան գործել և աշխատել է մի շրջանում, մի մթնոլորտում, որ չէ եղել «Մշակի» շրջանը և մթնոլորտը, բայց դա չէ արգելում, իմ կարծիքով, որ «Մշակն» եւս այսօր յարգանքի և գնահատութեան իր խօսքն ասէ մի գործչի համար, որ գործել է համոզմունքով և որի վերջնական նպատակն ու ցանկութիւնը եղել է ծառայել հայ ժողովրդին, հայ դպրոցին և հայ բանասիրական գրականութեան։ Մենք այնքան քիչ ունենք պատրաստված, կրթված գործիչներ, մանաւանդ ուսուցչական և գրական ասպարէզներում, զինված եւրոպական գիտութեամբ, որ Իսահակ Յարութիւնեանի պէս ձեռնհաս անձինք ամենայն իրաւունք ունեն սպասելու հանրային յարգանքի և գնահատութեան։ Չը մոռանանք, որ բացի բանասիրութիւնից, Իսահակ Յարութիւնեանը իր գեղեցիկ թարգմանութիւններով մեր պատանիների և նոյն իսկ ժողովրդի ընթերցանութեան համար բազմաթիւ գրքեր է հայթայթել։

Ծնվելով 1863 թ. նա իր ուսումը ստանում է Ներսիսեան դպրոցում, որի դասընթացքը աւարտել է 1881 թ., ապա իր բարձր ուսումը ստանում է գերմանական համալսարաններում (Լայպցիգի և Ենայի) և աւարտելով 1888 թ. պատմական և մանկավարժական ճիւղերը վերադառնում է հայրենիք և նոյնիսկ առաջին օրից նուիրում է իրան հայ դպրոցի և գրականութեան ծառայութեան։ Ահա մանաւանդ այդ կէտը առանձնապէս գնահատելի է Իս. Յարութիւնեանի գործունէութեան մէջ, մի գործունէութիւն, որ եղել է արդիւնաւէտ, բարեխիղճ և որն այսօր գնահատվում է բոլոր այն անձերից, որոնք, անկախ իրանց ուղղութիւնից և համոզմունքից, իրանց հակառակորդների մէջ ամենից առաջ գնահատում են համոզմունքը և գործի գաղափարական կողմը։

«Մշակի» կողմից անձամբ, նաև իբրև խմբագիր «Արօր» ամսագրի, որին Իս. Յարութիւնեանը բերել է իր աշխատակցութիւնը, յայտնում եմ յարգելի յոբելեարին յարգանք և շնորհաւորութիւն։ Հ. Ա.

Գ. ԲԱԼԱՍԱՆԵԱՆԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

—

Վաղը տօնվում է նաև մի այլ յոբելեան։ Դա հայ բանասէր-գրող և ուսուցիչ Գրիգոր Բալասանեանի յոբելեանն է, որ տօնվելու է Երևանի գաւառի Բաշ գիւղում։ Այս յոբելեանը պէտք է տօնվէր մի քանի ամիս առաջ, բայց յետաձգվեց։ Բալասանեանն եւ բազմաշխատ և արդիւնաւոր գործիչ է եղել իբրև ուսուցիչ, գրող-բանասէր, ուստի, անկասկած, իրաւունք ունի հասարակական յարգանքի և վարձատրութեան, քանի որ մեր ժամանակներում գաղափարական գործունէութիւնը, որ չէ տալիս անհատին նիւթական վարձատրութիւն և որին պատկանում են գրական և ուսուցչական արուեստները, ոչ միայն լայն ծաւալ և տարածումն չէ գտնում, այլ հետզհետէ սահմանափակվում է։ Մանաւանդ շատ քիչ են մեր մէջ բուն ժողովրդի, գիւղացիական ժողովրդի հետ շփվողները։

Շնորհաւորում եմ այդ գործչի յոբելեանը, որ այսօր հասարակական գնահատութեան է արժանանում։ Հ. Ա.

ՄԿՐՏԻՉ ԱԹԱԲԷԿԵԱՆ

—

Այսօր, կիրակի, ամսիս 20-ին, Շամախու գաւառի Սաղեան գիւղում տօնվելու է Բուդաղեան դպրոցի աւ.-ուսուցիչ Մկրտիչ Աթաբէկեանի ուսուցչական գործունէութեան 40-ամեայ յոբելեանը։

Աւելորդ չենք համարում համեստ յոբելեարի մասին հաղորդել մի քանի կենսագրական տեղեկութիւններ։

Մկրտիչ Աթաբէգեանը բնիկ սաղեանցի է։ Ծնվել է նա 1853 թւին։ Նրա հայրը, որին «դիլմանջ Յըվագիմ» էին անուանում գիւղում, եղել է պաշտօնական թարգման և միևնոյն ժամանակ՝ Սաղեանի վանքի միաբանութեան մէջ տիրացու։

Մանուկ հասակում Մկրտիչը աշակերտել է տիրացու և միևնոյն ժամանակ բուռն Սահակ Յովհաննեանցին, ապա վանքի միաբան Յովսէփ վարդապետ Փինաչեանցին վանքի անդաստան ուսումնարանում։ Տեղափոխվելով Շամախի քաղաք, նա մտել է թեմական հոգևոր դպրոց։ Այնտեղից նա անցել է պետական երեքդասեան դպրոց, յետոյ դըպրոցին կից մանկավարժական կուրսերի քննութիւնը տալով՝ ստացել է ուսուցչական վկայականը։

Վերադառնալով իր ծննդավայր Սաղեան գիւղը, նա յանձն է առել տեղական ուսումնարանում դասատուի պաշտօն 1873 թ.։ Այնուհետև նա յաջորդաբար ուսուցիչ է եղել Շամախու հայոց հոգևոր դպրոցում,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ՏԻՊԵՐ

—

Կաղ Թաթոսը

Ուղիղ երկու շաբաթ էր՝ Թաթոսը բերնի ծամոն էր դարձել գիւղամիջում։

Առանց այն էլ նրան չէին սիրում իր վաշխառու, չար ու քինախնդիր բնաւորութեան համար։

Այժմ նա տալիս էր գայրոյթի մի նոր առիթ։

Նրանց բազմանդամ ընտանիքում բաժանումն էր տեղի ունենում. եղբօր որբերը, չափահաս դառնալով, այլևս չէին ուզում միասին ապրել։

Թաթոսի համար դա մեծ հարուած էր։

Եւ ահա նա առիթից օգտվելով զրկում էր իր հարազատ եղբօր զաւակներին։

Այդ մասին խօսում էր ամբողջ գիւղը գայրոյթով լի։

Ի՞նչ ածական ասես, որ չէին տալիս նրան. էլ կաղ դև, էլ թարս Թաթոս, էլ օձ Թաթոս...

Ու զարմանալի է. բոլորն էլ նրան սազ էին գալիս։

Սակայն տարօրինակ բան. Թաթոսին իր ներկայութեամբ քաշվում էին որևէ բան ասել։

Բաւական չէ դա. դեռ կային մարդիկ էլ, որ նրան խրախուսում էին. ոմանք իրանց առերես հաւանութեամբ, ոմանք էլ պառակտում սերմանելու հաճոյքից դրդված։

Այդ միջոցներին էր, որ մի քանի հոգի, մի արև օր պատսպարված հաստաբուն չինարու ստուերի տակ, կէսօրին զրուցում էին։

Դրանք Ա... գիւղի պատուաւորներն էին...

Քրքրելով գիւղի խէրն ու չառը, նրանք վերջ ի վերջոյ հասան օրվայ նորութիւններին։

Ուստա Ստեփանը, որ Թաթոսի հարևանն էր, սկսեց պատմել նոր մանրամասնութիւններ...

Միւսները ունկնդրում էին...

— Ընը՞, անունը տուր, սուփրան գցիր,— բացագանչեց զրուցողներից մէկը, որ ամենքից տարիքով էր, համարեա 60-ի մօտ։

Հապ-ափին—այդպէս էին կանչում նրան—պըպղած, մէջքը ծառին թիկն տուած ու մորթէ բուխարա փափախը գլուխը խրած այնպէս, որ նրա տակից հազիւ էին նշմարվում աչքերը, ձախ ափի մէջ բռնել էր բռնօթամանը, իսկ աջ ձեռքի երկու մատով՝ բութով ու ցուցամատով՝ վերցրած պուտ քթախոտի փշրին ուղղել դէպի կարմրած, մսալի մեծ քիթը, որի տակից անկարգ կերպով աջ ու ձախ էին մեկնվել արդէն սպիտակաւուն, բայց քթախոտի քաշելուց դեղնած ընչացքները։

Բացագանչելուց յետոյ նա բարձր հազաց, գլուխը կախեց և թաւ ունքերի տակից ջրակալած, լայնաբաց աչքերը, խոժոռաբար ոլորելով, խէթ հայեացք նետեց նորեկի վրա ու մէկէն քթախոտը մօտեցրեց նախ աջ ռունգին, ապա՝ ձախին, և այնպիսի ոյժով վեր քաշեց քթով, որ ակամայից աչքերը ճպճպացրին, ուժանակի պայթիւնի պէս մի փռշտոց առաջացաւ, ու դէմքի երակները վերից վար, ճակատից սկսած մինչև պարանոցը, փքվեցին ու ցնցվեցին նուագարանի զարնվող լարերի նման։

Մի բոպէ լռեցին ամենքը, նայեցին դէս ու դէն և, համարեա, միաբերան հարց տուին.

— Խէ՞ր-լինի, ի՞նչ պատահեց։

— Խէր։ Խօսում էիք կաղ-դևից. հրէն գալիս է,—փնթփնթաց Հապ-ափին։

Իրաւ որ հեռուից կաղի տալով դէպի նրանց էր գալիս Թաթոսը։

— Ասում են, ամեն օր թակ-մհակ *) է նրանց տանը,—կարճատև լռութիւնից յետոյ, նկատեց Օվին, որի ականջները միշտ սուր էին բամբասանքներ որսալու համար։

Եւ ապա, դիմելով ուստա Ստեփանին, աւելացրեց.

— Թակ-մհակ չէ, բայց կատարեալ հարսանիք է... Որբերը կանգնել են, թէ մենք քեզ հետ էլ չենք ուզում ապրել... Թաթոսին էլ խօմ լաւ էք ճանաչում, ընկնաւորվել է ու փրփրել. «Դէ որ չէք ուզում, կորէք տնիցս. բաժին չունէք այստեղ»։

— Պօ-պօ... Զօրն բան է,—շրթունքները չփչփացնելով՝ թընչաց Հապ-ափին ու ապա, ցոյց տալով ճկոյթի եղունգը, անշշուկ ձայնով փսփսաց.—սկի մի էսքան էլ խիղճ չունի այդ մարդը։

Հապ-ափին այլևս չը շարունակեց։

Խօսակցութիւնը դադարեց դրանով։

Կաղ Թաթոսը մօտենում էր արդէն։ Նա համեմատաբար երիտասարդ մարդ էր, հագնված քաղաքի մարդու նման. բաճկոնով, բաճկոնի տակից կարճ արխալուղ, վերջինիս վրայից էլ արծաթէ գօտին կապած, պօլսապօժկայով, գլխին կարտուզ դրած։ Ձախ ձեռքը, սեղմված բռունցքով, ետևին դրած, աջով նա յենվում էր կարճ ու հաստ ձեռնափայտին ու քայլում, օրօրվելով մէկ դէպի աջ, մէկ դէպի ձախ... Բնականից կարճ էր նրա աջ ոտը, և երբ փոխում էր քայլերը, իրանն էլ յարմարվում էր նրան. ուղիղ մասը մնում էր անփոփոխ, իսկ պակասաւոր աջ կողքը թեքվում էր դէպի ներքև և կորցնում հաւասարակշռութիւնը. այնպէս որ ծռվում էր գլխարկը, կախվում աջ ունքը, աջ ընչացքը, թուշը, ներքևի շրթունքի կէսը, ծնոտի կաշին, աջ ուսը, աջ ոտը... Մի խօսքով՝ նրա ամբողջ կերպարանքը, դէմքն ու աչքերը երկուսի էին բաժանվում, կարծես։

Այդքանը բաւական չէր, գլուխն էլ, որ պէտք է իսկապէս միակ բացառութիւնը կազմէր, այնքան էր տոգորված իր պակասութիւնները չը մատնելու ցանկութեամբ, որ ծայրայեղօրէն դէպի հակառակ կողմն էր ձգտում...

Այդպիսով կաղ Թաթոսի մէջ չէր մնում այլևս ոչ մի շիտակ գիծ. նրա ամբողջ արտաքինի վրա դրված էր խաբէութեան ու ցինիկութեան դրոշմը։ Նա ինքը թարսութեան մարմնացումն էր։

Նրա ներքինն էլ արտաքինի պատճէնն էր. նրա մտքի ու սրտի մէջ տեղ էր բռնել երկդիմի աշխարհը. բարւոյ ու չարի, լաւի ու վատի ընդդիմամարտ ոյժերը այնտեղ անընդհատ պայքարում էին իրար հետ, և այդ բաղխումների հետևանքը լինում էր այն, որ նրա բնաւորութեան, վարմունքի ու գործերի մէջ չարն ու վատը միշտ էլ գերազանցող էր հանդիսանում։

Միակ համակրանքի արտայայտութիւնը նրա դէմքի վրա մշտական ժպիտն էր, սակայն նա էլ նրա խորամանկ զննող հայեացքների փայլից զալկանում էր ու փոխվում թունաւոր հեգնանքի։

Զարմանալի չէ, որ նրա յայտնվելը դուրեկան չը պիտի լինէր մեր զրուցողների համար...

Եւ սառն ու անտարբեր եղաւ նրանց ընդունելութիւնը։

— Ի՞նչ դարդ ունիք. շուաք տեղ, սիրտներդ էլ հանգիստ, ասացէք, ծիծաղեցէք,—կատակախօսելով մօտեցաւ Թաթոսն ու նըստեց նրանց մօտիկ նստարանի վրա, կաղ ոտը մեկնելով գետնին յենված ձեռնափայտի վրայից։

Հապ-ափին ինչ-որ փնթփնթաց քթի տակ ու դարձեալ քթին մօտեցրեց քթախոտը։

— Բա որ էս ասելն ու ծիծաղելն էլ չը լինի, հիմիկվայ ցաւերին կարող ենք դիմանալ,—ընդառաջեց իր հարևանին ուստա Ստեփանը կարեկցական շեշտ տալով իր ձայնին։

— Թող նա դարդ անի, ով հարամութեամբ է հաց ուտում,—խորհրդաւորութեամբ նկատեց սակաւախօս Դաւիթը հայեացքը դէպի հեռուն ուղղելով։

Թաթոսը շուռ եկաւ դէպի նա, խոժոռ հայեացքով տնտղեց նրան ոտից մինչև գլուխ. ուզում էր բան ասել, բայց լեզուն կծեց ու էլ ոչինչ չասաց։

Լսվեց Հապ-ափիի շրթունքների չըպպոցը։ Ամենքը նրան նայեցին, սպասելով թէ ինչ պիտի ասի նա։

— Ամօթ չը լինի հարցնելը. դու ինչ դարդ ունիս, որ սիրտդ հանգիստ չի,—հարցրեց Հապ-ափին լեզուն ծամծմելով և կիտված երկար ունքերի տակից աչքերի սև բիբերը սևեռելով Թաթոսի վրա ու կոպերը բաց ու խուփ անելով։

— Հալա հարցնում էլ էք,—վշտացած եղանակով նկատեց Թաթոսը։—Ամբողջ տասն օր է էրվում, փոթոթվում եմ մեր որբերի ձեռքից, մի հարևան չեկաւ, մի բարի մարդ չեղաւ, որ գար խրատ տար, խելքի բերէր նրանց ու հասկացնէր, թէ «ախր, հօրեղբայրդ իր բերնից կտրել է ձեզ կերակրել, իր կեանքը, երիտասարդ օրերը մաշել է ձեզ համար, շալակով քար ու աղբ է կրել ու ձեզ պահել, հագցրել ու մեծացրել»։ Տեսնում էք էս կօշտացած մատները. չանգռտելով առու եմ փորել ու Մարալանը ջրել շէն դարձրել, իսկ այսօրվայ օրը վեր են կացել, թէ «ջոկվում ենք, թէ Մարալանի հողերը պէտք է կէս անենք...»։ Բա սա արդարութի՞ւն ա, Աստուած վէր կանի։

— Բան չը կայ, Թաթոս. երեխաներ են, էլի դու եօլա տար,—միաբերան շտապեցին բարեխօս լինել ուստա Ստեփանն ու Օվին, թէև շատ լաւ գիտէին, որ անարդարը հէնց

---

*) Թակ-մհակ—տուր ու դմփոց։

նոյն քաղաքի քաղաքային երկդասեան դըպրոցում, ապա Բագուի Հայ Մարդասիրական Ընկերութեան Մեսրոպեան, Ախալքալաքի պետական երկդասեան, Շամախու գաւառի Մադրասա, Քեարքեանջ և այլ գիւղերի դպրոցներում։

Վերջապէս 1906 թւից նա հրաւիրվել է աւագ-ուսուցչի պաշտօնով Սաղեանի Բուդաղեան դպրոցը վեցամեայ դասընթացքով։ Ներկայումս այդ դպրոցը Մկրտիչ Աթաբէկեանի տնօրէնութեան և Բուդաղեանների առատաձեռնութեան շնորհիւ հայ լաւագոյն դպրոցներից մէկն է, որի նմանը չունի և ոչ մի հայ գիւղ։ Դպրոցն ունի և երկրագործական բաժին, նաև բոլոր մանկավարժական յարմարութիւնները։ Բաւական է ասել, որ նրա տարեկան ծախսն է 8000 ր., մի բիւջէ, որին կարող է նախանձել ամեն մի հայ միջնակարգ դպրոց։

Իբրև ուսուցիչ՝ Մկրտիչ Աթաբէկեանը յայտնի է իր մանկավարժական ընդունակութեամբ, կամքի ոյժով և անսպառ եռանդով։ Իբրև մարդ և գիւղական դասի անկեղծ բարեկամ՝ նա վայելում է անխտիր ամենքի յարգանքն ու սէրը իր անսահման համեստութեան, ազնուութեան և ամենքին օգտակար լինելու պատրաստակամութեամբ։ Ցաճախ նա իր սուղ միջոցներից նիւթապէս անգամ օգնել է իր աշակերտներից շատերին, միջոց տալով նրանց իրանց ուսումը շարունակելու։

Ամենուրեք, ուր Մկրտիչ Աթաբէկեան եղել է ուսուցիչ, աշխատել է գիւղական շրջաններում տարածել ընթերցասիրութիւն, բանալով ընթերցարաններ, յորդորելով ամենքին բերել տալ լրագիրներ, գնել գրքեր և այլն։ Իր շրջանում ոչ մի հասարակական գործ չէ կատարվել առանց նրա մասնակցութեան։ Իր ծննդավայր գիւղում նա եղել է նախաձեռնող գիւղի միդասեան դպրոցը պահող «Ս. Ստեփաննոս ընկերութեան», «Լրագրասէր ընկերութեան», «Գրադարանական ընկերութեան», «Մանր վարկի ընկերութեան», «Սպառողական ընկերութեան»։ Նա եղել է անվարձ դասատու Շամախու հայ բողոքականների կիրակնօրեայ դպրոցում։

Երկու անգամ Մկրտիչ Աթաբէկեանը ընտրվել է պատգամաւոր Պետական Դումայի անդամ ընտրելու համար։

Եւ ամենուրեք նա իր պարտքը կատարել է հազուագիւտ բարեխղճութեամբ և եռանդով։

«Մշակի» խմբագրութիւնը անկեղծ ոգով շնորհաւորում է համեստ հասարակական գործչի 40-ամեայ արդիւնաշատ գործունէութիւնը։

ՈՂՋՈ՛ՅՆ ՅՈԲԵԼԵԱՐԻՆ

Ներսիսեան դպրոցի ընկեր-ուսուցիչների նախաձեռնութեամբ կատարվում է այսօր Իսահակ Ցարութիւնեանի մանկավարժական գործունէութեան 25-ամեայ և գրական գործունէութեան 30-ամեայ յոբելեանը։

Հայկական կեանքում, մանաւանդ վերջին շրջանում, այս կամ այն գործիչների յոբելեանները քիչ չեն տեղի ունեցել, բայց որ տօնվի մէկի գրական ու մանկավարժական գործունէութեան յոբելեանը միասին, այդ, եթէ չենք սխալվում, առաջին նշանակալից դէպքն է գոնէ ռուսահայերի մօտ։

Ապա ուրեմն այսօրվայ յոբելեարը արժանի է աւելի ուշադրութեան։

Ցարութիւնեան գործել է իրաւամբ անսովոր ջանասիրութեամբ ու տոկունութեամբ թէ մանկավարժական ասպարէզում և թէ գրական, մանաւանդ գերմանականից աջող հայերէն թարգմանութիւններով։ Պատկանելով «Արձագանքի» հոսանքի բանակին, Ցարութիւնեան ոչ պակաս եռանդով հանդէս է եկել նաև հրապարակախօսութեան մէջ։ Ցամենայն դէպս նա իր չափաւոր ուղղութեամբ և հեզ բնաւորութեամբ մինչև օրս յարգելի է եղել տարբեր հոսանքների ներկայացուցիչների կողմից, որոնք նրանում տեսել են անսպառ առաջադէմ գործչի։

Տողերիս գրողը, այսօրվայ յոբելեարին աշակերտած լինելով ի թիւս հարիւրաւոր ուրիշների, որոնք այսօր կեանքի մարդ են դարձած, շատ լաւ գիտէ Ցարութիւնեանի մեղմ և հայրական վերաբերմունքը դէպի իր սաները։

Իս. Ցարութիւնեանը մեր պատանեկան-ուսանողական անցեալ բերկրալի կեանքի լաւագոյն վկաներից ու յուշարժան անձերից մէկն է...

Մէկը այն անձերից, որոնք յարգելի դաստիարակիչ են հանդիսացել մեր անդարդ, ալեկոծ կեանքից, սրա բնիկաւոր ցաւ ու հոգսերից հեռու, ազատ ուսելու տարիներում...

Այն կրթօղներից, որոնք իրանց սանիկների սրտում սերմանում են գաղափարական ձգտումներ, հասարակութեանը պիտանի անդամ դառնալու ջերմ բաղձանք ու զգացմունք։

Հետևաբար այսօր, երբ տօնվում է մեր նախկին ուսուցչի յոբելեանը, որ կատարեալ իրաւունք ունի բաց ճակատով ասելու հայ ժողովրդին՝ թէ «իմ անցած ճանապարհը աննպատակ ու ապարդիւն չէ եղել, որովհետև ես, ի կատարումն իմ հասարակական պարտականութեան, գցել եմ իմ համեստ լուման հայ սերնդի դաստիարակութեան ու մայրենի գրականութիւնը զարգացնելու վսեմ գործին», չեմ կարող ես իմ թոյլ ձայնը չը խառնել նրանց ձայնին, որոնք, բոլորած յոբելեարի շուրջ, բացագանչում են անկեղծօրէն՝

— Կեցցէ Իսահակ Ցարութեանը։

— Կեցցէ խօսքի ու գրչի արժանաւոր աշխատաւորը։ Ն.

ԵՐԿՈՒ ՅԱՐԳԵԼԻ ՅՈԲԵԼԵԱՆՆԵՐ

Մենք հայերս զգացմունքի մարդիկ ենք, գիտենք բուռն կերպով արտայայտվել սուգի և բերկրանքի օրերում հարուստ զգացմունքներով, որոնք կլանում են մեր հարուստ բառարաններից անհամար ուռուցիկ բառեր՝ բնորոշելու գործը կամ գործողը։

Քաղաքն իր հարուստ կեանքով ներկայացնում է բազմատեսակ հանդէսների, նոր երևոյթների շտեմարան։ Այն, որ սովորական է քաղաքի համար, նոյնը շատ արտասովոր և սրտագին է գիւղի համար։ Համեման հանդէսը քաղաքում պաշտօնական ձև է ստանում, ինչպէս և յարգանքն արտայայտելու կերպը, սակայն բոլորովին առանձնայատուկ ու սրտառուչ է գիւղացու պարզ արտայայտութիւնը դէպի իր հազար ու մի ցաւերի անկեղծ բարեկամը, ուսուցիչը, որը՝ մանաւանդ՝ իր ամբողջ ույժերը գործադրել է գիւղացու մտքում լոյս, սրտում բարի հատիկներ սերմանելու։

Այսօր կատարվում է երկու արժանաւոր ուսուցիչներից մէկի՝ Ի. Ցարութիւնեանի 25-ամեայ, միւսի՝ Մ. Աթաբէկեանի 40-ամեայ ուսուցչ. պաշտօնավարութեան յոբելեանը. առաջինը քաղաքում, երկրորդը գիւղում, կոչումը նոյնը, գործունէութիւնը տարբեր։

Քաղաքի ուսուցիչ-յոբելեար Ի. Ցարութիւնեանը 25 տարի անխոնջ աշխատաթեամբ իր ույժերը գործադրել է տարբեր բազմազան պայմաններում աճող ծնողների զաւակաց կրթական գործին։ Ճանաչել դրանց հոգեբանութիւնը ու առանձնած գործը արդիւնաւորել՝ Ի. Ցարութիւնեանի նման համեստ, անաղմուկ ուսուցիչները միայն ընդունակ են և կարող։ Խորին յարգանք Ի. Ցարութիւնեանին։

Միւսը՝ Մ. Աթաբէկեան 40 տարի գործել է նորաբոյս մացառների մէջ, ամենաքնքոյշ հոգացողութեամբ այդ մացառներից պտղատու ծառեր աճեցրել։

Գիւղական խաւար մթնոլորտ, սեղմ հորիզոնով մի ասպարէզ, ուր 40 տարի անձնուէր ուսուցիչը, գիւղացու անկեղծ բարեկամը նուիրաբերել է իր մտաւոր ու բարոյական ույժերը յօգուտ իր սրտի ու հոգու հետ կապված մանուկ սերնդի։

Շնորհաւորում եմ երկու յարգելի յոբելեարների մաքուր գործունէութեան յաղթանակը։ Սահ. Զաքարեան

Գիշի

ԻՍ. ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Շամախու թեմական և ծխական դպրոցների կողմից ներկայացուցիչ է ընտրված Իս. Ցարութիւնեանի յոբելեանին մասնակցելու համար Գ. Գարդիշեանը։

—

Թիֆլիսի հայոց ծխական դպրոցների ուսուցչական կազմերը որոշել են միացեալ մասնակցել Իս. Ցարութիւնեանի յոբելեանին։ Ներկայացուցիչներ ընտրված են՝ տիկ. Սողալեան, պ. պ. Միս. Ասլեան և Պետրոս Ցովհաննիսեան։

ԱՅՆՈՒ ԱՄԵՆԱՅՆԻՒ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

Ես հրապարակ դուրս բերեցի ազգային թատրոն չլինելու հարցը այն խորին հաւատով, որ չի գտնվի մի հայ, որ հակաճառէ ինձ, թէ ազգային թատրոնն աւելորդ բան է։ Բանից դուրս է գալիս, որ ես սխալված եմ։ Դեռ մի քանի ամիս առաջ մի թերթ իմ առաջարկը աշխատեց ծաղրել և արտասանեց իմ մասին այնպիսի լիրբ բառեր, որոնց միայն ապականութեան վայրերում կարելի է լսել։ Ապա նոյն իմ միտքը՝ ազգային թատրոն ունենալու՝ թափուկ սրախօսութեան նիւթ դարձաւ մի խեղկատակի համար։

Ի հարկէ, հայհոյանքների դէմ կռւելը ապարդիւն է։ Ի հարկէ խեղկատակների հետ վիճաբանելը ամօթալի է։

Բայց երբ ասպարէզ են գալիս անձինք, որոնք ամենալուրջ կերպով հրապարակօրէն ասում են, թէ մեզ ազգային թատրոն հարկաւոր չէ, այդպիսի կարծիքներին պէտք է լրջօրէն պատասխանել։

Ես կը պատասխանեմ տիկին Սոֆիա Դանիէլ-Բէկին իր «Ո՞րն է կարևորը» յօդուածի առիթով։

Մի անձ, որ հասարակական խնդիրներ լուծելու մէջ մասնակցելու ցանկութիւն ունի, չէ կարող չիմանալ որ, չը կայ աշխարհի երեսին մի ցաւ, որի բուժումը աւելորդ համարվի։ Եթէ տիկ. Ս. Դանիէլ-Բէկի ղեկավարը անպատճառ իր անհատականութեամբ ասպարէզում երևալու ընդհանուր հայկական թուլութիւնը չը լինէր, անկասկած հակաճառելու փոխարէն պիտի ծափահարէր ազգային թատրոն կառուցանելու իմ առաջարկը, հարկաւ, եթէ զգում է, թէ ինչ ասել է ազգային թատրոն։

Բայց նրան հարկաւոր է մի ջերմ ցանկութիւն ունեցնել, և դրա համար առաջ է քաշում այնպիսի մի արտիլերիա, որից ես, ուղիղ ասած, սարսափեցի։ Արդարև, ի՞նչ կարող եմ ասել գիւղական դպրոցների, գիւղական համալսարանների, գրադարանների, հայ գիւղացու հողի քանակն աւելացնելու, ամայի ու անպտղաբեր դաշտեր ոռոգելու, Թիւրքահայաստանում հայերի գաղթականութեանը վերջ տալու և այլն, և այլն հազար ու մի այդպիսի սքանչելի առաջարկների դէմ, բացի այն, որ այդ բոլորը դեռ քիչ է, պէտք է ամբողջ Կովկասի վիճակն էլ բարւոքել, ամբողջ Ռուսաստանն էլ բարեկարգել, Եւրոպան էլ ազատել պատերազմի ճգնաժամից, ամբողջ երկրագունդն էլ ծաղկեցնել, համայն մարդկութիւնն էլ երջանկացնել։

Մի տան մէջ կայ մի ծանր հիւանդ։ Հիւանդի մերձաւորներից մէկը շտապում է բժիշկ հրաւիրելու։ Եւ յանկարծ հարևաններից մէկը կանգնում է հիւանդի մերձաւորի առջև և աղաղակում. «Ի՞նչ ես անում, թող քո հիւանդին անխնամ. ահա այն տանն էլ, երրորդումն էլ, չորրորդումն էլ հիւանդներ կան. թող բժիշկը նախ և առաջ նրանց օգնէ»։

Ճիշդ այդպէս է վարվում տիկ. Դանիէլ-Բէկը։ Ես ասում եմ, թէ ազգային թատրոնը մեր ամենաանհրաժեշտ կարիքներից մէկն է. նա ասում է, թէ, չէ, կան ուրիշ շատ կարիքներ։ Նա պնդում է, քանի որ հայ գիւղացու տնտեսութիւնը բարւոք չէ, ազգային թատրոնը աւելորդ է։

Իսկ ռուս գիւղացու դրութիւնը բարւօք է, իսկ ֆրանսիացի գիւղացու, գերմանացու, աւստրիացու դրութիւնը իդէալակա՞ն է եղել, երբ նրանք հիմնել են ազգային թատրոն։ Վերջապէս՝ ինչով է բարձր վրացի գիւղացու վիճակը հայ գիւղացու վիճակից, որ վրացիներն այժմ ունեն սեփական թատրոն. կամ որքան բարւոք է խեղճ թուրք գիւղացու վիճակը, որ Բագուի թուրքերն անգամ այժմ ձգտում են ունենալ ոչ միայն ազգային թատրոն, այլև ազգային օպէրա։

Կամ գուցէ աշխարհի երեսին հայերն են ամենախելօք ազգը։ Եթէ տիկ. Ս. Դանիէլ-Բէկը այսպէս է կարծում, նախանձում եմ նրան։ Սակայն ինձ՝ միամտիս թւում է, որ հայը խելքի կողմից դեռ շատ բան սովորելու ունի ոչ միայն եւրոպացիներից, այլ նոյն իսկ իր կիսակիրթ հարևաններից։

Ապացոյց, որ ինձ նման միամիտները դեռ ստիպված են այսօր բացատրել նրան այն տարրական բանը, որ նոյն իսկ կիսակիրթ ազգերի համար վաղուց է պարզված, այն է՝ ազգային թատրոնի անհրաժեշտ նշանակութիւնը։ Ստիպված են բացատրել նոյն իսկ այն անձանց, որ տասնեակ տարիներ թատրոն յաճախելով՝ դեռ ոչ միայն չը գիտեն և չեն զգում թատրոնի անսահման կրթական նշանակութիւնը նոյն իսկ գիւղացու համար, այլ և աշխատում են գիտակցաբար թէ անգիտակցաբար (որ միևնոյն յանցանքն է) ջրել այդ նշանակութիւնը։

Ոչ, յարգելի տիկին, ինչ որ էլ ասէք, ազգային թատրոնն այնու ամենայնիւ անհրաժեշտ է։ Շիրվանզադէ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Եղանակները Շուշում

Շուշի, 14 ապրիլի

Ամիսներ շարունակ չոր ու ցամաք եղանակներ լինելով՝ գաւառի բուսականութիւնը ենթարկված էր փչանալու բաղդին։

Մի շաբաթ սրանից առաջ սկսեցին ցուրտ եղանակներ լինել։ Շուշուն յատուկ մառախուղը, ամպը և անձրևները, նոյն իսկ ուշացած ձիւնը, եկան ասպարէզ։ Ճիշդ է, վար ու ցանքերը մասամբ օգտվեցին այդօրինակ եղանակներից, սակայն կոկոն բացած ծառերն ու ծաղկունքները բաւական տուժեցին։ Եւ ահա այդ բոլորից յետոյ՝ պակասն էլ լրացրեց այսօրվայ կարկուտը։

Արցախեցի

—

Նոր գործակալ

Նոր-Բայազէտ, 13 ապրիլի

Մի ամիս կը լինի, ինչ քաղաքս եկաւ նոր գործակալ Ռուբէն արեղայ Մանասեան և ստանձնեց իր պաշտօնը։ Նոր-Բայազէտը տասնեակ տարիների ընթացքում ունեցել է շատ վարդապետներ, որոնք հոգևորական սքեմ հագնելուն պէս ստանձնել են մեր գաւառի գործակալութեան պաշտօնը։ Դրանց մէջ աչքի են ընկել իրանց նշանաւոր գործունէութեամբ՝ Մատթէոս, Խորէն, Կիւրեղ (այժմ հանգ.), Արտակ և այլն, որոնք յետագայում թողել են մեր քաղաքը և աւելի բարձր պաշտօններ ստանձնել։ Դրանցից ամէն ոք իր հերթին աշխատել է բարեկարգել մեր գաւառի դպրոցական, եկեղեցական, ազգային և ժողովրդական հաստատութիւններն ու կենցաղը։

Մեր նոր գործակալը, որ դեռ երիտասարդ է, իր հասարակական գործունէութեան առաջին քայլերը մեզանումն է առնում։

Ս. Ե. Ա.

—

Տարափոխիկ հիւանդութիւններ

Ղըզի (Շամշ. գաւ.), 17 ապրիլի

Երրորդ ամիսն է, ինչ քութէշը բոյն է դրել մեր գիւղում և վերջին օրերս բաւականաչափ տարածվել է հասարակութեան բոլոր խաւերում։ Օր չէ անցնում, որ մահվան դէպք չը պատահի. սարսափը տիրել է տեղացիներին։

Քութէշին զոհ են գնում կաթնասուն մանուկներից մինչև 11—12 տարեկանը։ Այս վարակիչ ախտը երկրորդ տարին է, ինչ բոյն է դրել Բերդ գիւղում, որից վարակվեցինք նաև մենք։

Քութէշին մեծ զոհ տուեցին Բերդը, Վերին և Ներքին Ճամբարակները, և ահա հերթը հասաւ մեզ. կասկածելի չէ կարող լինել, որ միւս շրջակայ գիւղերը ազատ կը մնան։

Դժբաղդութիւնը կայանում է նրանում, որ նոյն իսկ տեղացիք իրանք են նպաստում են այդ հիւանդութեան վարակման։ Փոխանակ մասամբ չէզոք դիրք բռնելու, լալկան կանայք իւրաքանչիւր վախճանված երեխայի բաց դագաղի վրա դնում են զանազան մրգեղէններ և յետոյ բաժանում նրա հասակակիցների մէջ։

Վերջին օրերս տեղացի մի երիտասարդ բանւոր, ծաղկով վարակված, Գանձակի գերմանական գաղութներից եկաւ, և դրանից վարակվելով այժմ 5—6 հիւանդ կայ ծաղկով վարակված։ Այս էլ վերջին լրացումն էր, որ հասաւ մեզ։ Լաւ է գոնէ, որ մեզանում կան բաւականաչափ պատուաստված երեխաներ։

Ս. Զ. Միք.

—

Լուրեր Ցարսկիէ-Կոլոդցից

Ցարսկիէ-Կոլոդցի, 15 ապրիլի

Եկղարում նաւթահորերի փորելը շարունակվում է։ Դրված է երկու վիշկա։ Մէկում փորել են մօտ 50 սաժէն։ Բագուի կրեսոս Լիանոզեանը մեծ «ЗАЯВКА»-ներ է վերցրել Շիրակում։

Զինւորական վարչութիւնը մերժեց ժողովրդի խնդիրը, որով խնդրում էին իրաւունք տալ Ջրմուղու ճիւղն անցկացնել հայոց եկեղեցու բակը։

Երկարատև չոր եղանակներից յետոյ, եկան յորդ անձրևներ. եղանակը ցրտեց։

N. N.

ինքը Կաղ Թաթոսն էր։

— Չէ, չէ. ախր, արդարութիւն ա՛ դա։ Հը՞, ինչու չես խօսում Հապ-ափի։ Ասա տեսնեմ։

— Ինչ ասեմ, ախպէր,—վարանումով սկսեց Հապ-ափին,—ուղիղը ասեմ՝ կը նեղանաս։ Սուտ ասելն էլ էս հասակում մեծ մեղք է. մի ոտս արդէն գերեզմանումն է։

— Չեմ նեղանայ։ Ասա, միայն թէ՝ հոգի ունիս, ուղիղն ասա,—ասաց թախանձագին ժպիտով Թաթոսը սուր աչքերը նրա վրա յառելով։

— Լաւ։ Ասում ես՝ Մարալանից բաժին են ուզում։ Բայց ախր ինչու ես այն տեղը հասցնում, որ իրանք ուզեն։ Չէ որ նրանք էլ քեզ հետ հաւասար բաժին ունեն այնտեղ։ Սարգիսը որ չը լինէր, Մարալանը աւաղ անող չէիր դու...

Այդ խօսքերը անսպասելի էին Թաթոսի համար. խայթված պէս նա ցնցվեց ողջ մարմնով։

— Սուս, հալևոր, սուս, — արտասանեց նա խորը մռնչալով,—լեզուդ քեզ պահիր, թէ չէ միրքիդ մազերը մին-մին կը փետեմ...—շարունակում էր գայրոյթից կարմրած ու տաքացած Թաթոսը...

— Թաթոս, խեղճ մարդն ինչ ասաց, որ նեղանում ես....—սկսեցին հանգստացնել այս ու այն կողմից։

— Թու, թու,—երեսը շուռ տալով, գետնին թքեց Թաթոսը ու, իբր թէ հազիւ կարողանալով իրան զսպել, բացագանչեց.

— Միդա՛յ քեզ, Աստուած...

— Տեսնում ես, խիղճդ նեղացար... արդարութիւնը երևի փուշեկան չէ,—վշտացած տոնով նկատեց Հապ-ափին։

— Հը՜մ... արդար ուէթին... հաւասարութիւն... ինչ էք սպասում. էն երեխաների մօտն էլ ասացէք, էլի, նրանց գլուխները մտցրէք, խելքահան արէք, որ շատ գան միւս հում-հում ուտեն։ Ամեն կողմից թևտուէք նրանց, որպէսզի շատ ջոկվեն, ունեցած-չունեցածս ձեռքիցս առնեն, տկլորցնեն, ու դուք էլ նայէք հրհրաք... Բարի կամեցողներ էք հա...

Մի բոպէ լռեց Թաթոսն ու նորից սկսեց աւելի տաքացած, այս անգամ կարծես ինքն իր հետ էր խօսում, մոռացած իրան շրջապատողներին, պաշտպանվելով.

— Սրտացաւներ էք, խօսք չը կայ. ասում էք, թէ ես զրկում եմ որբերին։ Չէ. ես որբերին տալիս եմ էն, ինչ որ նրանց կը հասնի պապենականից։ Մարալանը չեմ բաժանի. քրտինքիս աշխատանքովն եմ առել այն. նրանից մի թիզ էլ չեմ տայ որբերին։ Ողջ աշխարհքն էլ որ հաւաքվի, չեմ տալու, չեմ տալու, չեմ տալու,—ասաց Թաթոսը վեր կենալով տեղից։

Հէնց որ նա շուռ եկաւ գնալու, մեր խօսակիցները իրար երեսի նայեցին ու թօթվեցին գլուխները։

— Թարսի տղայ թարս։ Գոմշի կողք ունի այդ մարդը, Աստուած վերջը բարի անի,—երկու մատները բանօթամանի մէջ խոթելով, փսփսաց Հապ-ափին, երբ Թաթոսի հեռացող քայլերի ձայնը չէր լսվում այլ ևս։

— Չի իմանում, որ հարստութեամբ ձեռք բերած հացը մարսել չի կարելի, որ որբերին զրկողը վերջի վերջոյ ինքը զուրկ կը մնայ,—շտապեց իր դատավճիռը տալ սակաւախօս Դաւիթը։

Նա մինչև այդ ոչինչ չէր խօսում և սպասում էր, որ հերթը իրան հասնի։ Ու հասել էր հերթը։

Ըստ երևոյթին պատահածից շատ գոհ էր մնացել նա. աշխուժախօսութեամբ նա այլ ևս անճանաչելի էր դառել և շարունակ սրախօսում էր կաղ Թաթոսի հասցէին, կրկնում էր նրա խօսքերը, ընդօրինակում ձևերն ու շարժումները.

— «Շալակով քար ու աղբ եմ կրել, էս մատներով չանգռտել, առու փորել»,—հեգնանքով կրկնում էր Դաւիթը Թաթոսի խօսքերը,—վայ Թաթո՛ս, էդքան էլ սուտ...

Բոպէական լռութիւնից յետոյ, Դաւիթը վեր կացաւ նստած տեղից, չուխայի փեշերը թափ տուեց ու կանգնեց մէջ տեղում։

«Դրա աշխատութեան մասին մի բան պատմեմ,—սկսեց նա հանդարտ ձայնով։

«Մի անգամ մեր Սահակի հետ նստել էինք իրանց այգում, Մարալանում։ Թաթոսենց ու Սահակենց այգին, դէ գիտէք էլի, իրարից բաժանվում էին բարձր պատով։ Թաթոսն էլ իր եղբօր տղայի՝ Սարգսի հետ իրանց այգումն էր։ Մենք թթենու տակ նստած՝ մեր բարձր դիրքից տեսնում էինք, թէ ինչպէս Սարգիսը, գլուխը քարշ, առու էր դուրս տալիս, իսկ Թաթոսը փայտը ձեռքին դէս ու դէն մրմռում էր։ Նրանց խօսքը լսվում էր պարզ կերպով։

— Սարգիս,— մին էլ լսվեց Թաթոսի ձայնը։

«— Հրամմէ, — պատասխանեց Սարգիսը ցածից։

«— Այստեղ եկ, տես էս փռված խոտը չորացե՞լ է. թէ լաւ չի չորացել՝ շուռ տուր։

«— Ա՛յ տղայ, Սարգիս, էս քարը ինչու չես դնում իր տեղը,—դէպի եղբօրորդին դառնալով ու փայտը պատից վայր ընկած քարին խփելով՝ ցոյց տուեց Թաթոսը։

«Սարգիսը քարը դրեց իր տեղը ու վերադարձաւ գործին։

«Արևը արդէն մայր էր մտնում։ Հանդերում աշխատողները հետզհետէ գիւղն էին վերադառնում։

«Թաթոսի ձայնը նորից լսվեց, բայց արդէն շատ մօտիկ, այգու պարսպի առջևից, և աւելի ուժեղ ու աւելի անհանգիստ։

«— Սարգիս, ջորին քաշիր գայ։

«Սարգիսը մօտ բերաւ ջորին։

«— Էս խոտերը բարձիր։

«Սարգիսը չորս խուրձ խոտ երկու-երկու կապած բարձեց ջորու վրայ։

«— Ե՞լի մնացաւ։ Երկուսն էլ ետնից կապիր,—նկատողութիւն արեց Թաթոսը։

«Սարգիսը լուռ ու անխօս կատարեց այդ հրամանը ևս։

«Մինչ այդ՝ Թաթոսը կաղի տալով առաջ գնաց ու բարձրացաւ մի մեծ քարի վրա։

«Հէնց որ Սարգիսը բարձելը վերջացրեց, Թաթոսի հրամանը նորից լսվեց.

«— Դէ քաշիր գայ այստեղ, քարի տակը։

«Ի հարկէ, Սարգիսը չը մերժեց։

«— Լոխտէն պինդ պահի՛ր, հա,—զգուշացրեց Թաթոսը ու, նրան մեկնելով ձեռնափայտը, աւելացրեց.—Է՛ս էլ պահիր։

Ապա Թաթոսը մի քիչ կռացաւ, աջ ձեռքով բռնեց փալանի տանգը ու, աջ ոտքը մեկնելով, իրան ձգեց ջորու վրա՝ խոտի խուրձերից պատրաստված մի քիչ փոս ու բաւականին փափուկ թամբի վրայ։

«— Դէ հիմա ինձ տուր լօխտան,—շարունակեց Թաթոսը մեկնելով ձախ ձեռքը։

—Փայտս էլ տուր,—լօխտան ձեռքն առնելուց յետոյ աւելացրեց նա, աջն էլ մեկնելով։— Ոտքս էլ զգացրու»։

Այստեղ ունկնդիրները այլ ևս չը կարողացան իրանց ծիծաղը զսպել։ Բայց Դաւիթը շարունակեց նոյն տոնով.

«Երբ այդ ևս վերջացաւ, ջորու գլուխը նա շուռ տուեց դէպի պարսպի կողմը...

«— Ա՜յ ջորի, դէ չո՛ւ,—ասաց Թաթոսը ձեռնափայտով ջորու վզին խփելով թեթև։

«Հազիւ էր դուրս եկել այգու պարսպից, երբ Թաթոսը նորից կանգնեցրեց ջորին.

«— Սարգիս, ա՜յ Սարգիս։

«Հօրեղբօր ձայնը լսելուն պէս, նորից մօտ վազեց Սարգիսը։

«— Տես, շուտ չը գաս տուն հա. թող ոտ ու ձեռքը քաշվի, ջրերը արա թթուտների ու խաղողների վրա և յետոյ տուն եկ...,—պատուիրեց Թաթոսը ու ջորին նստած առօք-փառօք տուն վերադարձաւ օրվայ ծանր աշխատանքից դադրած։

«Գիւղական հարսի պէս, հլու հնազանդութեամբ Սարգիսը կատարում էր Թաթոսի ամեն մի քմահաճոյքը. ասում էր՝ նստիր, նստում էր, ասում էր՝ վեր կաց, վեր էր կենում, ասում էր՝ քնիր, քնում էր, կեր՝ ուտում էր, գողացիր՝ գողանում էր...

«Տեսնում էք... Թաթոսը մէջքով քար կրի, Թաթոսը, կաղ Թաթոսը մատ-մատին խփի, եղունգներով առու հանի, այգի շինացնի... Թաթոսը տուն պահի, որբ մեծացնի... Դէ արի ու մի ասա. ո՛վ դատի, ո՛վ վայելի»,—վերջացրեց Դաւիթը, որ գիտէր կենդանի պատկերներ ստեղծել իր ծիծաղաշարժ ու սրամիտ պատմուածքներով։

Գուցէ մի փոքր գունաւորված էր նրա այդ պատմածը Թաթոսի մասին, բայց որ նա շատ ճիշդ էր բնորոշում Թաթոսին, դա անկասկած է։

— Է՛հ, մի մարդ որ ոչ խիղճ ունի, ոչ ամօթ, ինչ սպասել նրանից,—քթի տակ փնթփնթաց Հապ-ափին և, վեր կենալով պլպլած տեղից, բանօթամանը դրեց արխալուղի գրպանը, չուխի փեշերը թափ տուեց, աջ կողինը վրա բերեց ձախ ուսովը և շարժվեց դէպի տուն՝ ըմբշի ամուր ու հաստատուն քայլերով։

Նրա զրուցընկերները նոյնպէս ցրվեցին իրանց տները։

Ճաշելու ժամանակն էր արդէն։

Աշխատակից

Նորութիւններ Ղափանից

Ղաթարի հանքեր, 10 ապրիլի

Ամսիս 3-ին Վերին-Խոտանան կոչված գիւղից երեք վերստ հեռաւորութեան վրա գտնված է մի մարդու դիակ, որի միմիայն ոսկորներն են մնացել, իսկ միսը գազանները լափել են։ Սպանվածի ով, ինչ ազգութեան պատկանելը չէ հասկացվում։ Դէպքի մասին յայտնված է իշխանութեան, քննութիւն կատարելու նպատակով դէպքի վայրը այսօր ժամանից շրջանիս պրիստաւը, տանուտէրի հետ միասին։

Տարին երկու անգամ շրջանիս բոլոր գիւղերի իւրաքանչիւր տնից պահանջվում է երկու բանւոր (փանլահ)՝ հանքերից Գորիս տանող խճուղային ճանապարհի վրա աշխատելու։ Այսօր ես եկան և այդ մասին յայտնեցին։ Գարուն է, գիւղացու մի գործը հազար է դարձել և նա չը գիտէ որն անէ և որը թողնի. այսպիսի նեղ ժամանակ մի կողմից էլ պահանջում են բանւոր։

Ամսիս 3-ին Շրվենանց գիւղի ծխ. դպրոցի բարձր բաժանման աշակերտները, թւով 20 հոգի, իրանց ուսուցչի առաջնորդութեամբ, Առաջաձոր գիւղի վրայով եկան Հալիձոր, դիտեցին Դաւիթ-բէգի բերդը, ապա անցան հանքերը և հէնց նոյն օրը վերադարձան էլի յետ։

Ամսիս 5-ի երեկոյեան յորդ անձրևից յետոյ սկսեց կարկուտ գալ, որից վնասվեցին ինչպէս Կաւարտ, Ղաթար, այնպէս և Պառաւաթումբ գիւղերի արտերը, այգիները և ամեն ինչ։ Կարկուտը այն աստիճան սաստիկ էր, որ ձիւնի պէս դիզվեց և միաժամանակ մնաց գետնի վրա։ Վնասը զգալի է. դժուար թէ վնասված արտերը, այգիները իրանց էլի կարող լինեն ուղղել։ Գիւղացիք ընկած են խոր հոգսի մէջ։ Եղանակը, որ վերջին օրերս մեղմանում անձրևային էր, սաստիկ ցրտեց և նոյնիսկ ձիւն եկաւ։ Այժմս գետինը ծածկված է ձիւնով։

Կայծոն Շքեղեան

ՄԱՐԻԷՏՏԱ ՇԱՀԻՆԵԱՆԻ ՄՕՏ

«Մարիէտտա Շահինեան»՝ թերևս հնչի անծանօթ շեշտով ընթերցողներից շատերի համար, բայց այսօր ռուս հասարակութեան համար նա անծանօթ անձնաւորութիւն չէ։ Մայրաքաղաքի լրագիրներից մի քանիսը իր ժամանակին գովասանական յօդուածներ նուիրեցին նրան, արձանագրելով՝ հայազգի երիտասարդ բանաստեղծուհու գեղեցիկ առուեստը։ 1913 թ. ընթացքում Մոսկվայում լոյս տեսած նրա համեստ ժողովածուն սպառվեց երկու հրատարակութեամբ, մի անհասկանալի երևոյթ մեր իրականութեան մէջ։ Այս թռուցիկ տպաւորութիւններում աւելորդ ենք համարում խօսել Մարիէտտա Շահինեանի բանաստեղծութիւնների մասին և տալ այն քննադատականները, որ երևացել են ռուս մամուլի մէջ. գուցէ մի այլ անգամ առիթ ունենանք գրել այդ մասին ընդարձակ, ծանօթացնելով միաժամանակ հայ հասարակութեանը երիտասարդ բանաստեղծուհու ստեղծագործութիւնների հետ՝ տպագրութեան յանձնելով նրանց հայերէն թարգմանութիւնը։

Վերջին խօսքերից արդէն կեզրակացնի ընթերցողը, որ հայազգի բանաստեղծուհին հանդէս չէ եկել նուիրաբերելու իր տաղանդը մայրենի գրականութեան։ Բուսած ու աճած հեռաւոր հիւսիսում, ընդարձակ Ռուսաստանի հէնց սրտի մէջ՝ Մոսկվայում ստացած իր կրթութիւնը, նա օտար է մնացել հայ կեանքին, լեզուին ու գրականութեանը, թէև իր զգացմունքներով սաւառնող դէպի բուն հայրենիքը, «Հայաստան», կովկասեան բարձունքները։

Վերջերս առիթ ունենալով ծանօթանալ նրա հետ, երբ բեմ ելաւ կարդալու իր բանաստեղծութիւնները Մոսկվայի հայ համայնքի առջև, մենք այցելեցինք նրան իր բնակարանում, ժամադիր եղած նախապէս։ Փայտաշէն նոր տան մէջ, մի համեստ, լուսաւոր սենեակում իր ուսանողուհի քրոջ հետ մէկտեղ ապրում է Մարիէտտա Շահինեանը, որ իր «Orientalla» գրքոյկի 5-րդ հրատարակութիւնն է պատրաստում՝ տարին բոլորած։

Նկատելով մեր անճշդապահութիւնը ուշանալուն համար, նա սիրալիր պատասխանեց մեր բոլոր հարցերին, հաղորդելով մի շարք տեղեկութիւններ իր մասին։

Նա ծնվել է 1888 թ. Մոսկվայում, համալսարանի հանգուցեալ պրիվատ-դոցենտ Սերգէյ Դաւիթովիչ Շահինեանի ընտանիքում. նա իր միջնակարգ կրթութիւնը ստացել է այնտեղի գիմնազիաներից մէկում։ Այնուհետև աւարտել է բարձրագոյն կուրսերի փիլիսոփայական բաժինը։ Ներկայումս պատրաստվում է մագիստրական դիսերտացիա տալ։ Դեռ 7 տարեկան հասակից փոքրիկ Մարիէտտան սկսել է ոտանաւորներ գրել. 17 տարեկան հասակում աշխատակցում էր արդէն Ռոստովի «Пр. Край»-ում։ 1909 թւականից հրատարակած ունի իր բանաստեղծութիւնները և մի քանի բրոշիւրներ. 1912 թւից աշխատակցում էր Мусагетъ հրատարակչ. ընկ. «Труды и дни» թերթում։ Մեր խօսակցութեան ընթացքում նկատեցինք յարգելի օրիորդի անսպառ եռանդը դէպի գրական աշխատանք, սէր դէպի երաժշտութիւն, ձգտում դէպի Կովկաս ու իր ազգակիցները։ Որպիսի՛ մեծ ուրախութեամբ նա կուզենար հայերէն լեզուով թարգմանված տեսնել իր երկերը. նա ցաւում էր, որ անմաս է հայ գրականութեան. մի տարի է միայն սովորել հայերէն և մեծ դժուարութեամբ հնչում էր նա իրան անհասկանալի բառերը. կուզենար սովորել, բայց արդէն ուշ է. նրան վիճակվել է եւրոպական կրթութիւն ստանալ։ Կուզէր այս տարի Թիֆլիս անցնել դասախօսութիւն կարդալու, սակայն առողջութիւնը վերականգնելու համար գնալու էր Նոր-Նախիջեւան՝ մօր մօտ, որ ամուսնացած է ռուս կալուածատիրոջ հետ։ Այնուհետև յարգելի բանաստեղծուհին հետաքրքրվելով մի քանի այլ խնդիրներով՝ նուիրեց մեզ իր գրքոյկներից մէկը։

Երկարատև այցելութեամբ չուզենալով խանգարել նրա զբաղմունքը, մաղթելով ույժերի վերականգնում և նոր փայլուն աշխատանք, մենք թողինք բանաստեղծուհու անշուք բնակարանը։

Գ. Հայկունի

Մոսկվա

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ «Մշակի» այսօրվայ համարը բաղկացած է 1½ թերթից։

◆ Վրաստանի էկզարխ արք. Ալէքսէյը հիւանդութեան պատճառով ապրիլի 21-ին, երկար-ժամանակեայ արձակուրդով, մեկնելու է Թիֆլիսից նախ Բաթում, ապա հանքային Ջրերը։

◆ «Закавказская Рѣчь» թերթը հաղորդում է, որ եղբ. Զուբալովները մի միլիոն րուբլի են նուիրաբերել Գորի քաղաքում գիւղատնտեսական դպրոց բանալու համար։

◆ Քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը ապրիլի 18-ից արդէն ստանձնել է իր պարտականութիւնները։

◆ Նահանգապետը, համաձայն քաղ. դումայի ընտրութեան, Ա. Ի. Ստավրովսկին հաստատել է քաղաքային քարտուղարի պաշտօնում։

◆ Քաղաքային գործերի նահանգական վարչութիւնը բեկանել է քաղ. դումայի՝ քաղ. վարչութեան անդամների ռոճիկը 800 րուբլով աւելացնելու որոշումը։ Իսկ վարչութիւնը նոյնպէս հարկաւոր է համարել հաստատել դումայի այն որոշումը, որով աւելացվելու է քաղ. ծառայողների ռոճիկները հինգ տարին մի անգամ։

◆ Մսավաճառները դիմել են քաղ. վարչութեան, խնդրելով բոլորովին վերացնել մսի համար սահմանված սակագինը և ազատ վաճառքի իրաւունք տալ։ Քաղ. սպանդանոցի վերատեսուչը մի գրութեամբ դիմել է քաղ. վարչութեան, որի մէջ խօսում է մսի սակագինը վերացնելու մասին, որովհետև այդ սակագինը իր նպատակին չէ հասնում, և նոյնպէս առաջարկում է ազատ վաճառքի իրաւունք տալ։ Այդ հարցերը քննելու համար երէկ կայացաւ քաղ. վարչութեան տնտեսական յանձնաժողովի նիստը։

◆ Այսօր, կիրակի, ամսիս 20-ին, ժողովրդական Տանը կը կայանայ Ն. Երմօլաեվի դասախօսութիւնը «Кооперація и потребительныя общества» թեմայով։ Սկիզբն է առաւօտեան ժամը 10-ին։ Մուտքը 5—10 կոպէկ։

◆ Ինչպէս հաղորդել էինք, ապրիլի 27-ին կայանալու է պոլիտեխնիկումի հանդիսաւոր հիմնադրութիւնը։ Այդ առիթով քաղ. վարչութիւնը խնդրել է իրաւասու Ս. Մ. Նունուֆարեանին, որ այդ օրը հոգ տանի Հալաբարի տները զարդարելու, որտեղից անցնելու է հանդիսաւոր թափորը դէպի պոլիտեխնիկումի հիմնավայրը։

◆ Փոխարքան թոյլատրել է Թիֆլիսի երեխաների ձրի ճաշարանի և գիւղատնտեսական գաղութի ընկ. ապրիլի 27-ին կազմել 1000 րուբլու վիճակախաղ։

◆ Այսօր բժ. Կարապետեանի այգում կայանալու է զբօսանք Թանդոյեան օրիորդաց դպրոցի օգտին ճոխ ու հետաքրքրական ծրագրով։

◆ Թիւրքահայ մի աշակերտ, Մովսէս Յարութիւնեան անունով, որ եկել էր Վանից Ներսիսեան դպրոցը մտնելու, բայց չը կարողացաւ ընդունվել տարիքի մեծութեան պատճառով, կամենում է մեկնել Կ. Պոլիս՝ շարունակելու իր ուսումը այդտեղի Կենտրոնական դպրոցում։ Լինելով միանգամայն զուրկ միջոցներից, նա ստիպված է դիմել մասնաւոր անձերի օգնութեան։ Եւ մեր խմբագրութեան խնդրանօք պ. Ս. Կիւլպէնկեան յանձն առաւ, որ միջնորդէ ֆրանսիական «Պակէ» շոգենաւային ընկերութեան՝ ձրիաբար տանելու նրան Կ. Պոլիս Բաթումից մեկնող շոգենաւով։ Սակայն յիշեալին անհրաժեշտ է ունենալ գոնէ 10 րուբլի թէ Բաթում գնալու և թէ ուտելիքի համար։ Յոյս ունենք, որ կարեկից անձինք չեն զլանայ ուսումնածարաւ պատանուն օգնութեան հասնել։ Նպաստը կարելի է ուղղել խմբագրութեան գրասենեակին։

◆ Վաղը, ամսիս 21-ին, Հասարակական ակումբում տեղի կունենայ մի զրոյց՝ ֆուտուրիզմի և ռուսական գրական նոր հոսանքների մասին։ Զրոյցին մասնակցելու են ակումբի դասախօսներից շատերը։ Առաջին խօսքը կասի 1-ին իգական գիմնազիայի դասատու Ն. Վ. Վոլկով։ Զրոյցից յետոյ կը լինի երաժշտական բաժին։

◆ Երէկ, ամսիս 19-ին, ցերեկով, Թիֆլիսի Մանթաշեան առևտրական դպրոցի պատուաւոր վերակացու և բարերար Ա. Յ. Մանթաշեանի մահվան երրորդ տարեդարձի օրը, նոյն դպրոցի շէնքում ի յիշատակ նրա հոգեհանգիստ կայացաւ։ Հոգեհանգստին ներկայ էին դպրոցի հոգաբարձական խորհուրդը, Թիֆլիսի վաճառականական ներկայացուցիչները վաճառականների աւագ Ա. Ն. Միլեանի գլխաւորութեամբ, մանկավարժական դասը և դպրոցի աշակերտութիւնը։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Պետական Դումայում մարտի 11-ին աշխատանքի տների օրինագծի քննութեան ժամանակ Չխէիձէն պնդեց, թէ երկրի վերածնութեան համար անհամեմատ յարմար հանդիսանում է հանրապետական ռէժիմը։ Լուրեր տարածվեցին, թէ Չխէիձէի այդ յայտարարութեան մէջ նկատվել է յանցանքի կէտ, որ պատժվում է 129-րդ յօդուածով, այդ պատճառով և ներքին գործերի մինիստրը մինիստրների խորհրդին հարց դրեց՝ ենթարկելու Չխէիձէին քրէական պատասխանատւութեան։ Մինիստրների խորհուրդը, ինչպէս ասում են, ելակէտ ունենալով այն, որ Դումայի կանոնադրութեան 14-րդ յօդուածը, որ որոշում է Դումայի քննութեանը ենթակայ գործերի նկատմամբ մտքերի, հայեացքների լիակատար ազատութիւն նրա անդամների համար, չէ տալիս օբսոլիւտ ազատութիւն, այլ սոսկ գոյութիւն ունեցող օրէնքի սահմաններում, գտաւ, որ պատգամաւորը, որ թոյլ է տալիս այնպիսի բան, որ պատշաճ է քրէական պատժի ամեն մի ուրիշ անձի համար, պէտք է նոյնպէս դատվի։ Այդ նկատումներով մինիստրների խորհուրդը անհրաժեշտ գտաւ գործ յարուցանել Չխէիձէի դէմ 129-րդ յօդուածով։ Բացի Չխէիձէից, ինչպէս ասում են, դատի է ենթարկվում նաև պատգամաւոր Կերէնսկին մարտի 5-ի նիստում արտասանած իր ճառի համար, վերաբերեալ Խարկովի համալսարանի դէպքերին։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Ապրիլի 18-ին, Եդուարդ Գրինտոի յայտնեց ոստիկանութեան, որ իր ծառան, Գորու գաւառի գիւղացի Վլադիմիր Բիչիխաշվիլի, բաց պատուհանից գողացել է 355 րուբ. 16 կոպ. և թաքնվել։ Ոստիկանութեան ձեռք առած միջոցներով ձերբակալվեց յիշեալ Բիչիխաշվիլին, որը յայտնեց, թէ ինքը գողացել է միայն 31 ր., որպիսի գումարը վերադարձվեց ըստ պատկանելոյն։

◆ Ապրիլի 17-ին, Ս.-Նշանսկայա փող. վրա բնակվող Գէօրգի Կադետով յանկարծամահ եղաւ։ Նրա դիակն ուղարկվեց Միքայէլեան հիւանդանոց։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

I

Ժիխարէվայի բենեֆիսը

Ռուսաց դրամատիկական խմբի ներկայացումները չը տեսնված աջողութիւն ունեն վերջերս։ Այնպիսի ույժեր, ինչպէս տ. Ժիխարէվան, տ. Աստրօվան, օր. Իգ. Քալանթար, Բարատով, Բօրիսօվ—առաջնակարգ ույժեր, գրաւում են թատրոնը հանդիսականների այնքան մեծ բազմութիւն, որ յաճախ շատերը յետ են գնում, չը կարողանալով ստանալ տոմսակ։ Եթէ այդպէս են սովորական ներկայացումները, պէտք է երևակայել, թէ որպիսի աջողութիւն են ունենում բենեֆիսային ներկայացումները։

Հսկայական աջողութիւն ունեցաւ և տրիումֆի վերածվեց տ. Ժիխարէվայի բենէֆիսային ներկայացումը, որ տեղի ունեցաւ ապրիլի 16-ին։ Դրվեց Պոտէխինի «Հոգով աղքատներ» կլասիքական դրաման, որի մէջ Կօնդօրօվայի դերը կատարում էր տ. Ժիխարէվան։ Աւելի տաղանդաւոր, աւելի գեղեցիկ տանել այդ դերը, քան ինչ տարաւ արտիստուհին, անհնարին էր, և Թիֆլիսի գեղարուեստասէր հասարակութիւնը երկար պէտք է յիշէ հանճարեղ դերասանուհուն և ափսոսայ, որ այնքան շուտ զրկվեց նրանից։ Հասարակութեան անկեղծ ոգևորված օվացիաներին վերջ չը կար, ինչպէս և ծաղկէ փունջերին և պսակներին։ Գեղարուեստական ամենամեծ հաճոյք ստացան այդ երեկոյ բոլոր նրանք, որոնց աջողվել էր տոմսակ ձեռք բերել և ներկայ լինել։

Հ. Ա.

II

Բարատովի բենեֆիսը

Վերջին շաբաթս, որ և դրամատիկ. խմբի հրաժեշտի շաբաթն էր, Թիֆլիսում երբէք չը պատահած տեսարանների ականատես էր հասարակութիւնը։ Չորս-հինգ օրով առաջ շտապում էին բոլորը տոմսակ ձեռք բերել՝ տաղանդաւոր դերասանուհի Ժիխարէվայի և դերասաններ Բօրիսօվի և Բարատովի բենեֆիսային ներկայացումներին հանդիսատես լինելու։ Օրինակ՝ անցեալ կիրակի, տոմսակ պահանջող հասարակութեան մի ծայրը՝ Արտիստական թատրոնի կասսայից հասնում էր մինչև Արքունական թատրոնի շէնքը... Եղել են շատերը, որոնք ամբողջ 5—6 ժամ հերթ են պահպանել, սակայն անկարող են եղել բենեֆիսային տոմսակ ձեռք բերելու՝ վերջինս սպառված լինելու պատճառով...

Եւ ահա՝ ուրբաթ, ապրիլի 18-ին, կատարվեց, կամ աւելի ճիշդը՝ տօնվեց այդ գեղեցիկ դրամատիկական խմբի կազմակերպման ինիցիատոր՝ Թիֆլիսի հասարակութեան կողմից յարգված դերասան Բարատովի բենեֆիսը։

Ներկայացվեց Անդրէեվի «Անֆիսա» դրաման, որը, պէտք է ասել, իր արժանիքներով աւելի ստոր մակարդակի վրա է կանգնած, քան հեղինակի միւս դրամաները։

Առաջին գործողութեան ընթացքում, Բարատովը բեմի վրա երևալուն պէս, հասարակութիւնը իր բուռն շնորհակալութիւնը արտայայտեց բազմաքանակ պսակների և գոյնզգոյն թռուցիկների տարափով և երկարատև ծափահարեց նրան։ Այնուհետև իւրաքանչիւր գործողութեան վերջում, հասարակութիւնը պատեց Բարատովին՝ մատուցանելով բազմաթիւ թանգարժէք ընծաներ, ծաղկեկողովներ, փնջեր ու պսակներ։

Գալով խաղին, պէտք է ասենք, որ Բարատով բաւական աջող ընտրութիւն էր արել, ստանձնելով պիէսի գլխաւոր հերոսի՝ երդ.-հաւատարմատար Կոստոմարովի դերը։ Նա ռէլիէֆ կերպով հանդէս բերեց այդ իւրատեսակ տիպի բացասական բոլոր յատկանիշները՝ տալով նոյնիսկ այնպիսի ուժեղ մօմենտներ, որպիսին երկրորդ գործողութեան ընթացքում Անֆիսայի հետ ունեցած ընդհարման տեսարանն էր։

Ժիխարէվա, որ ստանձնել էր Անֆիսայի դերը, իրան յատուկ խոշոր տաղանդով կարող եղաւ նպաստաւոր տրամադրութիւն ստեղծել, թէև, ճիշդն ասած, Անֆիսայի դերի մէջ չը կար Ժիխարէվայի սովորական ցնցող դրամատիզմը ուժեղ տեմպով արտայայտվելու լայն ասպարէզ։

Կոստոմարովի կնոջ՝ Ալէքսանդրա Պաւլօվնայի դերում հանդէս էր եկել օր. Ի. Քալանթար, որը շնորհալի կերպով ցուցադրեց սիրող կին-ամուսնի և, միևնոյն ժամանակ, իր ամուսնու բարոյական սնանկութեան և անհաւատարմութեան դիմաց բնաւորութեամբ թուլամորթ էակին յատուկ հոգեկան վերապրումները։

Տիպիկ էին Բօրիսօվ, Կօլօբօվ և Էյկէ իրանց ստանձնած դերերում։ X.

ՄԱՄՈՒԼ

Վանում հրատարակվող «Աշխատանք» թերթը լուր էր հաղորդել, թէ այդ քաղաքում գտնվող Վարժապետանոցի տեսուչ Մինասեան՝ այդ ուսումնարանի բարձր դասարանի աշակերտներից մէկին արտաքսել է, որովհետև վերջինս, հակառակ աշակերտներին արված նախազգուշացումներին, շարունակել է կարդալ «Երկունք» և «Մեհեան» հանդէսները, որոնք «հայ հեթանոսների» օրգաններ են համարվում, ինչպէս և Դանիէլ Վարուժանի «Հեթանոս երգեր» հատորը։

Կ. Պոլսի «Ազատամարտը» Մինասեանի այդ կարգադրութիւնը համարում է «հալածանք գրականութեան դէմ»։

Հիմք ունենալով «Ազատամարտի» այդ որակումը, Կ. Պոլսում այս տարվայ սկզբից հրատարակվել սկսող «Բանբեր» թերթի ֆէլիէտոնիստ Ե. Թ. հետևեալն է ասում.

Կեցցես պ. Մինասեան, շատ ապրիս, որ «Մեհեանը» և «Երկունքը» առիր աշակերտներուն ձեռքէն, որոնք «Մեհեանը» և «Երկունքը» կարդալու տեղ, աւելի լաւ կընեն՝ եթէ իրենց դասագրքերը կարդան և դասերնին սորվին, եթէ կուզեն մարդ ըլլալ։

Երբ դպրոցական տղայ մը «Մեհեան» և «Երկունք» կը կարդայ դասարանին մէջ և Դանիէլ Վարուժանին «Հեթանոս երգերը» կը սերտէ, վայ է եկեր այդ տղուն։ Ալ խեր սպասեցէք այդ աշակերտէն։

Հետևաբար կը շնորհաւորեմ պ. Մինասեանը՝ այն լուրջ հոգատարութեան համար, զոր կը տածէ իր աշակերտներուն հանդէպ։

Անշուշտ, ստորին կամ միջնակարգ դպրոցների աշակերտների ձեռքը չէ կարելի տալ այնպիսի գրքեր, որոնց ընթերցումը թոյլատրելի է միայն ուսանողական շրջանում։

*

«Սախալխո Գազէթի» լրագրի խոշոր ույժերից մէկը՝ Սիտղվան (խօսք) «Վրաց մամուլը» վերնագրով մի յօդուած է տպել այդ լրագրի ապրիլի 17-ի համարում, որի մի մասը վերաբերում է և հայ մամուլին։

Մեր լրագրի մէջ ես տպվեց տեղեկութիւն այն մասին, —ասում է Սիտղվան,— որ հայ գրողներից մէկը զրպարտութեան պատճառով դատի է ենթարկում մի երկրորդ հայ գրողի։

Նոյն մեր լրագրում առաջ էր բերված մի հայ հրապարակախօսի կարծիք հայ մամուլի վերաբերեալ, որը խիստ մռայլ գոյներով նկարագրելով ասում էր, որ հայ մամուլը շնորհիւ իր գործադրած անվայել ոճի և անհամակրելի վերաբերմունքի կորցրել է ամեն մի վստահութիւն, և ընթերցող հասարակութիւնը դադարել է այնտեղ տպվող տեղեկութիւններին հաւատ ընծայելուց, որովհետև այդ տեղեկութիւնները տուող մամուլի մէջ ամեն բան կայ, բացի ճշմարտութիւնից և այլն։

Դժբաղդաբար, — ասում է Սիտղվան, —հայերէն չը գիտենալուս պատճառով ես զուրկ եմ մեր հարևանների մամուլին հետևելու հնարաւորութիւնից, սակայն վերև յիշված խօսքերը երբ կարդացի, ակամայից յիշեցի մեր լրագրութեան մէջ մղվող բանակռիւը իր բնաւորութեամբ, յիշեցի այն թունալից լեզուն, որով մեզանում գրվում են յօդուածներ, և այն անմիտ ատելութիւնը, որ տիրում է մեր վիճաբանող հակառակորդների միջև. չեմ կարծում սակայն, որ հայ մամուլը բարոյապէս աւելի ընկած լինի, քան վրացականը։

Մեր հարևան հայերից,—շարունակում է հեղինակը,—մի բանով զանազանվում ենք։ Նրանք բարձրաձայն աղաղակել են սկսել և աշխատում են մամուլի մաքրութեան մասին մտածել, իսկ մենք լռում ենք, անտեսում, ոչինչ չենք ուզում զգալ և այդպիսով աւելի և աւելի արագ թափով շտապում ենք իջնել դէպի ներքև. Վրացերէն որ լրագիրն էլ վերցնելու լինէք, դուք նրա մէջ չէք գտնի հասարակական նշանակութիւն ունեցող լուրջ նիւթեր, նրա մեծ մասը վերաբերում է հակառակ բանակը անուանարկութեան ենթարկելուն, նրան անխիղճ, անպէտք, խաբեբայ և այլ ածականներ տալուն։ Մեր լրագրութեան ընթերցողը իր կարդացածից գալիս է այն տխուր եզրակացութեան, որ եթէ աշխարհումս կայ դժբաղդութիւն, դրա պատճառն այն է, որ գոյութիւն ունի մի ուրիշ բանակ և այդ բանակին պատկանող լրագիր ևս և այլն։

Եւ որ ամենից ցաւալին է, այս բոլորը մենք անում ենք իբր թէ ինչ-որ բարձր նպատակների անունով, մինչդեռ իրօք վարվում ենք դրա հակառակը. այրում, ստորացնում ենք անձնաւորութիւնը, թաղում ենք մեր մարդկայինը և նրա տեղ թողնում միայն անշնչացված կմախքը...

Ո՛չ, ապագայի գեղեցիկ և ազատ թագաւորութեան մէջ այսպիսի ստորացած էակները տեղ ունենալ չեն կարող։ Այդ թագաւորութիւնը կը ժառանգեն նրանք, որոնք սնված-մեծացած են փոխադարձ յարգանքով, արժանաւորութեան գնահատութեամբ և գիտակցութեամբ։

Այնտեղ չեն կարող ապրել նախանձով, ատելութեամբ լցված մանրիչ մարդուկներ։

Այնտեղ շնչել կարող են միայն կատարեալ մարդիկ...

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, 16 ապրիլի

Թոյլ տուէք «Մշակի» միջոցով մեր խորին երախտապարտութիւնն և շնորհակալութիւնները յղել մեր իրաւունքների մէջ վերականգնելու համար անչափ ջանք չը խնայող՝ ազգիս Վեհափառ Հայրապետին, տէր-Բագրէն վարդապետին, գերապատիւ Բագրատ եպիսկոպոսին, բարձրապատիւ տէր-Զաւէն վարդապետին և Պետական Դումայի անդամ ազնիւ պ. Միքայէլ Պապաջանեանին։

Նոյնպէս խորին շնորհակալութիւն ենք յայտնում նաև այն անձանց, որոնք թէ բարոյապէս և թէ նիւթապէս աջակցել են մեզ մեր 7-ամեայ տառապանքների ընթացքում։

Եւ վերջապէս հնարաւորութիւն չունենալով մեր իրաւունքների մէջ վերականգնելու առիթով զանազան յարգելի ընկերութիւններից, անձնաւորութիւններից ստացած շնորհաւորական հեռագիրներին և նամակներին զատ-զատ պատասխանել, յայտնում ենք բոլոր վերոյիշեալ ընկերութիւններին մեր խորին շնորհակալութիւնները։

Գարեգին աւ.-ք. Յովհաննիսեան, Կարապետ ք. Վարդապետեան, Արսէն ք. Հախումեան.

Յ. Գ.—Խոնարհաբար խնդրում ենք միւս հայ լրագիրներին ևս՝ հրատարակելու մեր ներկայ նամակը։ Նոյն քահանաներ

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, 16 ապրիլի

Ստացվեց յօգուտ Գայիանեան դպրոցի ճաշարանի Թիֆլիսի ժողովարանից 40 ր., որի համար ճաշարանի մասնաժողովը յայտնում է աւագների խորհրդին խորին շնորհակալութիւն։

Ճաշարանի մասնաժողովի նախագահուհի՝ Մարիամ Յարութիւնեան

—

Թիֆլիս, 16 ապրիլի

Նորաշէնի ս. Մարիամեան օր. ուսումնարանի ձրի ճաշարանի օգտին ստացվել են հետևեալ նուիրատուութիւնները, 1) Ա. և Մ. Հախվերդեանցներից ի յիշատակ նորոգ հանգուցեալ Վ. Փ. Հախվերդեանի 15 ր., 2) ի յիշատակ նորոգ հանգուցեալ Զաքարիա Թուլուկեանցի նրա ժառանգներից 15 ր. 3) Թամարա և Նիկողայոս Ղալամքարեանցներից ի յիշատակ նորոգ հանգուցեալ իշխ. Մելանիա Թումանեանցի պսակի փոխարէն 25 ր., 4) Իվան Եգօրովիչ Զուբալեանից ի յիշատակ նոյն հանգուցեալի պսակի փոխարէն 10 ր.։

Ճաշարանի վարչութիւնը բարեպաշտ նուիրատուներին յայտնում է իր լիաբերան շնորհակալութիւնը։

Նախագահ վարչութեան՝
Սարգիս աւ. քահ. Տիօյեանց

ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ

PAX

ԱԼԲԵՐՏ ԳՈԲԱ
Albert Gobat

Խաղաղասէրների աշխարհը կորցրեց իր եռանդուն առաջնորդներից մէկը՝ խաղաղութեան միջազգային բիւրոյի վերատեսուչ Ալբերտ Գոբային, որի մահը տեղի է ունեցել Բեռն քաղաքում—ուր գտնվում է միջազգային բիւրօն—մարտի 3/16-ին։

Նա մեռել է յանկարծակի, առանց որևէ հիւանդութեան, ճիշդ այն րօպէին, երբ, իբրև քարտուղար, մասնակցում էր այն յանձնաժողովի նիստին, որ գումարվել էր պատրաստելու առաջիկայում գումարվելիք խաղաղութեան համաշխարհային կօնգրէսի օրակարգը։ Նա մեռաւ, ինչպէս ասում են, կայծակնահար մահով, այն է ուղեղի մէջ արիւնհոսութիւնից, այն րօպէին, երբ ուրախ, զուարթ՝ ճառ էր արտասանում։

Նրա թաղմանը հաւաքվել էին Բեռնի համալսարանում նշանաւոր խաղաղասէրները, բազմաթիւ դիւանագէտներ, հրապարակախօսներ, գրողներ. արտասանվեցին բազմաթիւ դամբանական ճառեր, իսկ Շվէյցարիայի պետական խորհրդում նախագահ Բիւշար արտասանեց նոյնպէս մի փայլուն ճառ, որի մէջ երևան հանեց հանգուցեալի արժանաւորութիւնները թէ իբրև խաղաղասէր գործչի և թէ իբրև պետական խորհրդի անդամի։

Ալբերտ Գոբա ծնվել է 1843 թ. Շվէյցարական մի փոքրիկ գիւղում, Ժիւրայի մօտ, ուր իր հայրը պաստոր էր։ Նա աւարտեց իր ուսումը Շտուտգարդտի մի մասնաւոր ինստիտուտում և 21 տարեկան, արդէն իրաւագիտութեան դօքտոր էր, մի աստիճան, որ տուեց նրան Հէյդելբերգի համալսարանը։ Սկզբում պարապեց փաստաբանութեամբ Բեռնում, որի համալսարանում, և պրիվատ-դոցենտ էր և աւանդում էր ֆրանսիական քաղաքացիական իրաւունքը։ 1868-ին նա հաստատվեց Դելեմօն կանտօնում, իբրև փաստաբան, և ամբողջ 14 տարի այդ կանտօնի նշանաւոր իրաւագէտն եղաւ և պաշտպանեց մի քանի նշանաւոր դատեր, որոնք հռչակեցին նրա անունը։ Բայց նա զոհեց իր փայլուն ապագան և շուտով անձնատուր եղաւ հասարակական լայն գործունէութեան։ Շուտով նա ընտրվեց Բեռնի կանտօնի կառավարիչ, առաջ իբրև ժողովրդական լուսաւորութեան, յետոյ իբրև ներքին գործերի բաժնի վերատեսուչ։

Խաղաղասիրական շարժման նա անձնատուր եղաւ 1890 թւից ի վեր ամենայն եռանդով և անձնուիրութեամբ։ 1902 թ. նա ստացաւ Նօբէլի խաղաղութեան մրցանակը։

Բէլգիական սենատոր Լա Ֆօնտէն, իր արտասանած դամբանականը սկսեց հետևեալ խօսքերով. «Համաշխարհային մեծ հայրենիքի միջազգային քաղաքացուն ենք կամենում մատուցանել երախտագիտութեան մի վերջին վկայութիւն և մեր եղբայրական ու զգացված յարգանքը։ Նա ընկաւ իբրև դատերի ազնուագոյնի անձնուէր զինուոր, խաղաղասէրների մէջ այն ժամին, ուր իր ամբողջ մտածմունքը և ամբողջ կամքը լարված էին խաղաղութեան գործի իրականացման, մարդկանց մէջ։ Նրա մարտնչողի խառնուածքը թւում էր թէ չէր տրամադրում նրան լինել պասիֆիզմի պաշտպաններից մէնը. Նա դարձաւ ամենահեղինակաւոր պրօտագօնիստներից (ջատագովներից) մէնը»։

Անձամբ ճանաչելով Ալբէրտ Գօբային, երբ նա, իբրև Բէրնի միջազգային բիւրօյի պատուաւոր քարտուղար և վերատեսուչ, գործունեայ մասնակցութիւն ունէր խաղաղութեան համաշխարհային կօնգրէսներին, մենք զարմացած էինք այն մեծ եռանդի համար, որ նա գործ էր դնում խաղաղասիրական դատի պաշտպանութեան համար։

Հանգիստ անձնուէր և գաղափարական գործչի աճիւններին։ Հ. Ա.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՕՄՐՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

Ինչպէս յայտնի է արդէն հեռագիրներից, հօմրուլի բիլլը երկրորդ ընթերցանութեամբ ընդունվեց համայնքների պալատում 80 ձայների առաւելութեամբ։ Թէև կառավարական մեծամասնութիւնը հաւասար է այնտեղ 98 ձայների, բայց որովհետև մի քանի հոգի բացակայ են եղել, իսկ 8 հոգի իռլանդացիներից ձեռնպահ են մնացել որպէս բողոք կառավարութեան առաջարկի դէմ՝ Ուլստէրը ժամանակաւորապէս թողնել ընդհանուր բրիտանական պարլամենտի շրջանում, ուստի հօմրուլը ընդունվել է միայն 80 ձայների մեծամասնութեամբ։

Ձայնատուութիւնից առաջ տեղի ունեցած վիճաբանութիւնների ժամանակ, իռլանդացիների պարագլուխ Րէդմօնդը ասում է, որ հնարաւոր, նոյնիսկ անհրաժեշտ է համարում միացեալ թագաւորութեան ընդհանուր ֆեդերալիզացիան. բայց նախ՝ Իռլանդիան պէտք է առաջինը ինքնավարութիւն ստանայ ներկայ բիլլի ձևով, երկրորդ՝ Իռլանդիան պէտք է անբաժան մնայ։

Ուլստէրի ներկայացուցիչ Է. Կարսօնը համաձայնվում է ֆեդերալիստական կազմի հետ, միայն թէ նախ և առաջ հերթից հանվի հօմրուլի ներկայ բիլլը և հրաժարվել 6 տարվայ ժամանակամիջոցից Ուլստէրի վերաբերեալ։

Կաբինէտի անդամները յայտարարում են, որ կառավարութիւնը անհնարին է համարում Ուլստէրի ժամանակաւոր անջատումից հեռու գնալ։

Պահպանողական Բօնար-Լօու պնդում է, որ միայն երկու ելք կայ ներկայ դրութիւնից. կամ պէտք է ընդհանուր ընտրութիւններ նշանակել, կամ Ուլստէրը կատարելապէս անջատել Իռլանդիայից։

Եւ մինչ հօմրուլի բիլլը ընդունվում է պարլամենտում, Ուլստէրը շարունակում է զինվել, տեղի են ունենում զօրահանդէսներ, գաղտնի ներմուծվում են զէնք և ռազմամթերք։

Կառավարութեան դրութիւնը կրիտիկական է։

Ինչպէս յայտնի է, զօրքը, այսինքն օֆիցէրները (որոնք բարձր շրջանի, լօրդերի զաւակներ են), բացասաբար վերաբերվեցին կառավարութեան դիտաւորութեանը՝ զօրք ուղարկել Ուլստէր։ Օֆիցէրները գրաւոր երաշխաւորութիւն պահանջեցին կառավարութիւնից, որ իրանց չեն ուղարկի Ուլստէրի դէմ։ Զինուորական մինիստրը տուեց այդ երաշխաւորութիւնը, ինչպէս ասում են, թագաւորի ցանկութեան համաձայն։

Կառավարութեան այդօրինակ զիջումը և թագաւորի ակտիվ միջամտութիւնը երկրի քաղաքական գործերին՝ մեծ վրդովմունք և բողոք առաջ բերին առաջադէմ մամուլի և պարլամենտական մեծամասնութեան կողմից։ Համայնքների պալատում այնպիսի մի փոթորիկ բարձրացաւ, այնպիսի դիմադրութեան հանդիպեց կառավարութեան զիջումը թագաւորի ճնշման ներքոյ, որ սպառնում էր կաբինէտի անկումը։

«Ժողովրդական ներկայացուցչութեան սկզբունքը վտանգի է ենթարկված։ Զօրաբանակը, ով որ էլ նեցուկ լինի նրան, պարտաւոր է հպատակվել ընտրված կառավարութեան կամքին։ Մենք պահանջում ենք, որ ժողովրդական ներկայացուցիչները ազատ լինեն օրէնսդրական գործունէութեան մէջ թագաւորի և զօրքի միջամտութիւնից», ասում էին պարլամենտական ճառախօսները։

Նոյն դիմադրութիւնը, նոյն բողոքն էր լսվում և ամբողջ առաջադէմ մամուլի կողմից։

Կաբինէտի դրութիւնը կրիտիքական էր։

Զինուորական մինիստրը հրաժարական տուեց և յայտարարեց, որ օֆիցէրների պահանջին զիջել է նա ինքնակամ, անկախ կաբինէտից։

Մինիստրների նախագահ Ասկվիտը յայտարարում է, որ «երաշխաւորութիւնները» յետ են վերցված, որ կառավարութիւնը թոյլ չի տայ երբէք, որ զօրքը պայմաններ թելադրէ նրան։ Ասկվիտի յայտարարութիւնը ընդունվում է բուռն ծափահարութիւններով։ Կաբինէտը կայուն է մնում. զինուորական մինիստրի պորտֆէօյլը ընդունում է ինքը Ասկվիտը՝ իր վրա ընդունելով զօրաբանակի դիսցիպլինը վերականգնելու դժուար դերը։ Բայց ընդունելով զինուորական մինիստրի պորտֆէօյլը, պրեմիէրը այլևս պարլամենտի անդամ չէ, և պէտք է նորից վերընտրվի։ 1886 թւից Ասկվիտը անընդհատ Հիւսիսային Շօտլանդիայի ներկայացուցիչն է եղել պարլամենտում, և այժմ Անգլիայի հասարակական կարծիքը հետաքրքրված է, թէ որպիսի մեծամասնութեամբ կը վերընտրվի ներկայ պարագաներում մինիստրների նախագահը. հաւանութիւն կը տա՞ն, արդեօք, շօտլանդացի ընտրողները կաբինէտի ներկայ քաղաքականութեանը։

Եւ մինչ պարլամենտը ընդունեց հօմրուլը երկրորդ ընթերցանութեամբ և կարգաւորեց մինիստրական կօնֆլիկտը, ունիօնիստները (հօմրուլի հակառակորդները) ահագին ցոյց են անում, որպէս բողոք կառավարութեան իռլանդական քաղաքականութեան դէմ։ Լօնդօնի Հայտ-պարկի 14 պլատֆօրմաներից բողոքի ճառեր են արտասանում՝ Է. Կարսօն, Չէմբէրլէն, Բալֆուր և մի շարք ուրիշ քաղաքական գործիչներ։ Նրանք ասում են, որ երբէք Ուլստէրը չի հպատակվի Դուբլինի պարլամենտին. պահանջում են, որ կառավարութիւնը զօրք չուղարկի Ուլստէրի դէմ, որ արիւնհեղութիւն չը լինի։ Միտինգը վերջանում է հետևեալ բանաձևով. «Մենք բողոքում ենք նրա դէմ, որ զէնքի ուժով, զօրքի կամ նաւատորմի միջոցով, ստիպեն մեր իռլանդացի համաքաղաքացիներին հրաժարվել իրանց բնածին իրաւունքից՝ միացեալ թագաւորութեան պարլամենտին հպատակվելու. մենք պահանջում ենք, որ կառավարութիւնը այդ լուրջ խնդիրը անյապաղ դնէ ժողովրդի վճռին»։

Թէ այդ երկու քաղաքական հոսանքներից որը կը յաղթանակէ, դա ցոյց կը տայ երևի մօտիկ ապագան։ Ս. Դ.-Բ.

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

V

1913 յունվարից մինչև 1914 փետրվարի 9 Ամերիկայի զանազան մասերում սպանված և վիրաւորված կովկասահայեր

Լօս-Անջէլօս (Կալիֆօրնիա), 10 մարտի

1) Յունվար, 1913 թ.—Օվկիանոսի մէջ՝ կուի բռնվելով նաւից դուրս ձգված է կամ խեղդվելով ինքը նետված է ջրերը և խեղդված՝ Լիվերպուլից Նիւ-Եօրկ ճամբորդելիս՝ Թավշան-ղշլաղցի Յակոբ անունով մէկը։

2) Փետրվար.—Չիկագօյում գործարանի մէջ մէկ ոտքը կորցրած է բօղազ-քեասանցի Երանոս Մուրադեան։

3) Փետրվար — Կարապետ Արուշանեան, ղափլեցի, Սէնթ Լուիզի մէջ ոտքը ջարդված։ Ընդունած է 400 դօլար հատուցում։

4) Փետրվար. — Յարութիւն Յակոբեան, բաբալեցի, Լօս Անջէլօսի մէջ ոտքի մատը կտրված։

5) Փետրվար. — Նեվադայում երկաթուղային գծերի վրա աշխատելիս փլած ժայռի տակ ջախջախված է և սպանված երևանցի Ստեփան Գրիգորեան։

6) Մարտի 7.—Լօս-Անջէլօսում գործարանի մէջ աչքը վնասած է փիրվալեցի Մկրտիչ Գրիգորեան։

7) Մարտի 14.—Լօս-Անջէլօսում գործարանի մէջ ոտքը վնասած է բաշ-շօրագեալցի Կնեազ Հայրապետեան։

8) Մարտ. — Դէնվէրի մօտ (Կօլօրադօ) ճանապարհի վրա աշխատելիս սպանված է ախալքալաքցի Հայրապետ Մանուկեան և աջ բազուկը կորցրած նոյն տեղացի Սարգիս Գէորգեան։

9) Ապրիլ.—Սէնթ-Լուիզի մէջ երկաթի գործարանում ոտքի չորս մատները կորցրած է բօղազ-քեասանցի Գրիգոր Դանիէլեան։ Ընդունած է 275 դօլար հատուցում։

10) Ապրիլ.—Արտիկ գիւղացի մի սպանված է Չիկագօյի մէջ երկաթի գործարանում։ Մանրամասնութիւնները անյայտ են։

11) Ապրիլ.—Մօլլա-գէօքչէցի Խաչիկ Պօղիկեան սպանված է Լօս-Անջէլօսի մօտ։

12) Ապրիլ.—Րիվըր-Սայդի մէջ էլեքտրական գործարանում սպանված է Թավշան-ղշլաղցի մի հայ։

13) Մայիսի 14.—Լօս-Անջէլօսում կողքից և աղիքներից վնասված է բաշ-շօրագեալցի Սեդրակ Մխիթարեան։ Յաւիտենապէս զրկված է գործելու կարողութիւնից։ Մէկ կօպէկ հատուցում չէ ստացած։ Թշուառութեան մէջ։

14) Մայիս.—Սան-Ֆրանսիսկօյում ոստիկանի ձեռքով սպանված է երևանցի Խաչիկ Կարապետեան։

15) Մայիս. — Լօս-Անջէլօսում կողքից վնասված է փիրվալեցի Մատթէոս Մուրադխանեան։

16) Յուլիս.—Րիվըր-Սայդի մէջ սպանված է Թավշան-ղշլաղցի Գեղամ Զաքարեան։

17) Յուլիս.—Չիկագօյի մէջ երկաթի գործարանում պայթած է և սպանված հաշլինազարցի մի հայ։

18) Օգոստոս.— Լօս-Անջէլօսում ձեռքի մատները կորցրած է ալէքսանդրօպօլցի մի հայ։

19) Օգոստոս. — Բուէնոս Այրէսի մէջ (Հարաւային Ամերիկա) սպանված է Թոմարդաշցի Վաղարշակ Նիկօլեան։

20) Օգոստոս. — Բագրատ ?, ղըզըլ-չախչախցի, Լօս Անջէլօսի մէջ ձեռքը կորած։ Ընդունած է 400 դօլար հատուցում և հայրենիք մեկնած։

21) Սեպտեմբեր.—Բուէնոս Այրէսի մէջ սպանված է Թավշան-ղշլաղցի Օվիկ անունով մէկ հայ։

22) Հոկտեմբեր.— Լօս Անջէլօսում ողնաշարը ջախջախված է սվանվերդցի Արմենակ Յակոբեան. իր տգիտութեան պատճառով գոհացած է 200 դօլար հատուցումով և հայրենիք վերադարձած։

23) Հոկտեմբեր.—Գեղամ Յարութիւնեան, ղուլթնի-ղշլաղցի, Չիկագօյի մէջ երկաթուղուց կիսված։

24) Հոկտեմբեր.—Լօս-Անջէլօսում գանգից վնասված է եզանլարցի Արշակ Գէորգեան և 1600 դօլար հատուցում ստանալով՝ հայրենիք վերադարձած։

25) Հոկտեմբեր.—Բահիայի մօտ (Բրազիլիա) սպանված է կարսեցի Մանուկ Պետրոսեան։

26) Հոկտեմբեր. —Չիկագօյի մէջ երկաթի գործարանում սպանված է ախալքալաքցի Սարգիս Յարութիւնեան։

27) Դեկտեմբեր.—Չիկագօյի մէջ երկաթի գործարանում ոտքերը կորցրած է արդիկցի Սմբատ Տօնիկեան։

28) Դեկտեմբեր.—Չիկագօյի մէջ ոտքից վնասված է արդիկցի Ներսէս Փինթեան։

29) 2 Փետրվարի 1914 թ.— Լօս-Անջէլօսում երկաթի գործարանի մէջ սպանվեց Երևանի Ծագի-Նաման գիւղացի Ադամ Պապինեան։ Հայրենիքում ունի 8 անչափահաս մանուկներ, կին և մայր, որոնց ինքն էր կերակրում։

30) Փետրվարի 9.—Բիգ-Դրիկի մէջ (Կալիֆօրնիա) լեռնային ջրամբարներում գործելիս սպանվեց կարսեցի Մինաս Կարապետեան, 20 տարեկան։

31) Փետրվար 20.—Յովհաննէս Տօնոյեան, Թավշան-ղշլաղցի, Րիվըր-Սայդի մէջ աջ ձեռքի չորս մատները կտրված։

Նկատի առնելով այն հսկայ տարածութիւնը, որի վրա ցրված է ռուսահայ գաղութը, դիւրին է հասկանալ, որ ես՝ իբր մի պարզ անհատ՝ չէի կարող նման բոլոր դէպքերը արձանագրել, և հաւանաբար եղած են նման ուրիշ արկածներ եւս, որոնք ինձ յայտնի չեն։

Շատ մեծ դժուարութիւններով հնարաւոր եղաւ կազմել ներկայ անուանացանկը, և, հարկաւ, նա հեռու է ամբողջական գործ լինելուց, մանաւանդ որ յաճախ գրված են դէպքեր, առանց անունների յիշատակութեան։

1905 թւից մինչև 1913-ի սկիզբը մօտաւորապէս 15 մահվան դէպքեր են եղած կովկասահայ գաղութների մէջ Ամերիկայի զանազան մասերում. 15—20 ծանր վիրաւորվածներ և հաւանաբար 35—40 թեթև վիրաւորումներ։ 1913 թւի ընթացքում 15 սպանված, 14 ծանր վիրաւորված և հաւանաբար 50—55 թեթև վիրաւորված։ Այս վերջին շարքը ամենևին նկատի չեմ առած։

Բաղդատութեան դնելով ռուսահայ սպանվածների և վիրաւորների թիւը Ամերիկայի ընդհանուր Կովկասի գաղթականների թւի հետ—մօտ 4500 մարդ—ստանում ենք հետևեալ պատկերը.

Սպանվածներ՝ 0.3 տոկոս։ Ծանր վնասված՝ մօտ 0,3 տոկոս։ Թեթև վնասված՝ մօտ 4%։ Գումար 4.6%։

Սա, կարծեմ, Մուկդէնից ետ չէ մնում։

Remmius

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՆՈԹԵՐ

I

Պարսկական պարլամենտի ընտրութիւնները մօտ են վերջանալու. երկրի մի մասը հրաժարվեց ընտրութիւններին մասնակցելու, ազդված Քեալբալայի մեծ մուջտէյիդների շրջաբերականներից, որոնք յայտարարում էին մէջլիսի գոյութիւնը հակառակ «շէրիաթի» (չը նայած որ նոյն մուջտայիդները, տարիներ առաջ, այլ շրջաբերականներով, Ղուրանից բերած զանազան էաթների վաւերացումով, ապացուցանում էին մէջլիսի գոյութիւնը համաձայն Ղուրանի և շէրիաթի ոգուն). պարսկական որոշ շրջաններ ընտրեցին իրանց պատգամաւորները, բայց այնպիսի անձնաւորութիւններ, որոնք ոչ միայն գաղափար չունեն պարլամենտարիզմի մասին, այլև իրանց ամբողջ խառնուածքով, ամբողջ էութեամբ, մշուշապատ հայեացքներով՝ կողմնակից են «վերևում Աստուած, ցածում շահնշահը» լօզունգին, ջատագով՝ ինկվիզիցիայի տանջանքներին—ծեծ, ֆալախկա, ականջներ մեխել, դանակով մարդկանց վիզը հրապարակով կտրել և այլն. և այս բոլորը պիտի համախմբվեն պարսկական ինքնատիպ պարլամենտում՝ երբ ժողովրդական ներկայացուցչութիւն՝ սրբագործելու Շահ-Աբբասների, Նադիրշահերի, Մամադ-Խանների, Նասրէդդինների ինքնագլուխ արարքները։ Աւելի դառն հեգնութիւն պարլամենտարիզմի գաղափարին կարող է լինել, քան պարսկական ներկայ պարլամենտը։

II

Պարսկական ժանդարմէրիան փոթորկալից օրեր է անցնում։ Ամեն կողմ խռովութիւններ, կոտորածներ, կողոպուտներ, ապստամբութիւններ։ Բէլուջները վաղուց ոտքի են կանգնել, կոտորում, ջարդում, փշրում, քաղաքներ իրար ետևից խլում, ժանդարմական վաշտեր ոչնչացնում, շվէդական կապիտաններ ու մաժօրներ են սպանում։

Երկրի այս ու այն մասերից օգնութեան են ուղարկվում պարսկական «Թարմ» երիտասարդութիւնից կազմված ժանդարմներ, բայց հազիւ թէ թշնամին յաղթվում է, և ահա «դաչմաղ դա բիր հունար դըր» (փախչելն էլ մի ընդունակութիւն է)... Ինչ պիտի լինի այս բոլորի վերջը, Ալլահը գիտէ։

Մի հայ երիտասարդ՝ Կիկօ, որ պարսկական ծառայութեան մէջ լինելով իր ռոճիկները չէր ստանում, մի խումբ կազմեց, Թէհրանից դուրս եկաւ և սկսեց պետական հարկերը ժողովել ի հաշիւ իր և իւրայիններին պահանջի։ Ուղարկեցին նրա դէմ ժանդարմական վաշտեր, պուլէմէտներ, շնէյդէրներ, բայց քաջ Կիկօն այնպէս նեղը լծեց նրան, որ գոռոզ շվէդացիք կօմպրօմիսների մէջ մտան նրա հետ և նրա բոլոր պահանջները կատարելով հաշտվեցին։ Կիկօն յաղթականօրէն մուտք գործեց մայրաքաղաքը և այսօր էլ բեխերը ոլորած զբօսնում է Թէհրանի խիավաններում... Հազիւ մի տարի յետոյ, նոյն Կիկօյի խմբի անդամներից մէկը, համադանցի Աբգարը, գլուխ բարձրացրեց և ուզեց, որ իրան էլ սարդար կոչեն։ Նրա դէմ էլ ուղարկեցին ժանդարմներ, բայց ապարդիւն. այժմ բէլուջիներն են գլուխ բարձրացրել. թերևս վաղն էլ ղաշղայները, բախտիարները և այլն։ Ի՞նչ պիտի լինի այս թշուառ երկրի վերջը...

Մար
Ղավին

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

Մերսին, 2 ապրիլ

Օրերս տեղէս Զմիւռնիա մեկնեցաւ և անկից Կ. Պոլիս պիտի երթայ Միացեալի կրթական ընդհ. տեսուչ պրօֆ. Յովհ. Յակոբեանը, որ երեք շաբաթ առաջ կրկին Եգիպտոսէն աստ եկած էր։

Ալէքսանդրիաբնակ ազգային մը փափագ և տրամադրութիւն ցոյց տուած է իր ծախքով երկրագործական վարժարան մը շինել և հազար օրավար հողով օժտել զայն, Կիլիկիոյ մէկ յարմար վայրը։

Պրօֆ. Յակոբեանի վերադարձը կապ ունէր այս խնդրոյն հետ, որ դժբաղդաբար զերծ չէ դժուարութիւններէ։

Դժուարութիւններէն գլխաւորը կը կայանայ Կիլիկիոյ դաշտային կարևոր հայակեդրոն քաղաքներէն մէկուն քով հազար արտավար հող գտնելուն մէջ, ինչ որ անկարելի է գրեթէ, տրուած ըլլալով որ քաղաքաց շրջակայքը հողերը շատ մը անձանց կը պատկանին, և այդպէս նպատակ մը երևան ելլելուն՝ գինները անօրինակ պիտի բարձրացուին։

Ասոր հակառակ՝ քաղաքներէն հեռուները կամ այլ քիչ հայաբնակ տեղերը հող շատ կայ, և ընտիր հող՝ բաւական աժան, սակայն առանց ալ անյարմարութիւնքը, մանաւանդ ներկայ հանգամանքներու ներքև, ակներև են, և այդպէս կարևոր հաստատութիւն մը պիտի չկրնար իր նպատակին ծառայել։

Խնդիրը մանրակրկիտ խորհրդակցութեամբ առիթ հանդիսացաւ, և յարգելի պրօֆեսորը, Միացեալի Կիլիկիոյ ընդհանուր տեսուչին ընկերակցութեամբ, հետզհետէ այցելեց այդ նպատակաւ Ադանա, Տարսոն, Մերսինի շրջակայքը, Համիդիէ (Ջիհան), Կարս-Բազար և Սիս։

Վեհ. կաթողիկոսը, որ կրթական և մշակոյթի վերաբերող ամեն գործոց շատ համակիր է, խոստացաւ իր բարձր աջակցութիւնը չխնայել։

Վեհափառը բարեհաճեցաւ միանգամայն, իր հիւրերուն հետ, այցելել Սիսի մայրավանքին պատկանող Թլանի ագարակը, որ կը գտնուի Սիսի հարաւակողմը, անկէ մօտ երկու ժամ հեռու, Անարզաբա հին և անուանի բերդաքաղաքին աւերակաց մօտերը։

Թլանը, որ մօտ 10,000 օրավար տարածութիւն ունի, բաղկացած է ընտիր երկրագործական հողերէ։ Մէջը գտնուած բլրակի մը ստորոտէն եւ առատաբուխ ջուրերը կրնան ոռոգմանց ծառայել։ Բայց ափսոս որ վանքապատկան այդ կալուածը հազիւ կիսով մշակուած, եղածներն ալ, ձեռընհաս անձանց պակասութենէն, անգոհացուցիչ վիճակի մէջ են։

Թլանին շրջակայքը, սկսեալ Սիսէն մինչև Համիդիէ, մօտ 400,000 արտավար՝ ընդարձակ, և ամենամեծ մասամբ անմշակ ու ճախճախուտ հողերը, կըսուի թէ, ֆրանսական ընկերութեան մը յանձնուած են։

Եթէ իրականանայ այս ձեռնարկը, յուսալի է, որ օտարաց ձեռքին տակ բարելաւումի ենթարկուած այս մեծ հողաբաժիններու քովիկը գտնուող Թլանի ագարակն ալ պիտի կրնայ կանոնաւորուիլ, հազարաւոր ոսկիներ արդիւնք արտադրելով, մինչ այժմ հազիւ մօտ երեք հարիւր կը բերէ, մէջը ըլլալով նաև ջրաղաց մը, որ գլխաւոր եկամուտին աղբիւրն է։ Դիտող

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻՑ

Վան, 20 մարտի

Կ. Պոլսի թերթերից ու «Մշակի» թղթակից Շառայլի թղթակցութիւններից իմացաք անշուշտ այն խաղերը, որը Կ. Պոլսում խաղաց մի հայ կուսակցութիւն օսմ. երեսփոխանական ընտրութիւնների հարցի շուրջ, ինչպէս լաւ են ըմբռնել նրանք, որոնք հետևել են այդ իրադարձութիւններին։ Նոյն խաղերը խաղացվել են նախ վայրագոյրի ետևում, իսկ յետոյ համարձակօրէն, բուն իսկ բեմի վրա. իսկ չենք կարող ասել, որ նրանք պատիւ կարող են բերել դերակատար կուսակցութեան։

Նոյն խաղերը նաև գաւառներում, Էրզրումում, Մուշում, Բիթլիսում և նոյնպէս Վանում. Բիթլիսի առաջնորդը արդէն հրաժարական տուեց, իսկ միւս տեղերի առաջնորդները կամ փոխանորդները լուռ հետևում են խաղերին։ Այդ խաղերի ու ինտրիգների պատճառով հրաժարական տուեց երեսփ. թեկնածութիւնից ամենաարժանաւոր հայը՝ Մինաս Չերազ, ու հրապարակում մնացել են նոյն անխօս Փափազեանները, Վռամեանները ու ընկ.։

Ինչպէս գիտէք, հայ կուսակցութիւններն ու պատրիարքարանը նախ չը համաձայնվեցին մասնակցել ընտրութիւններին, պահանջելով համեմատական ու ազգովին ընտրութիւն. վերջում, երբ Իթթիհադը համաձայնվեց հայերին տալ 16 աթոռ ու յանձն առաւ նրանցից 12-ի ընտրութիւնը կատարել տալ պատրիարքարանի ցուցմունքով, կուսակցութիւնների համաձայնութեամբ որոշեցին դարձեալ ձեռնպահ մնալ, պատրիարքարանին թողնելով ընտրել չէզոք անձերի. այդ միջոցում ահա հեռագրական՝ լարախաղացութիւններ սկսվեցին Կ. Պոլսի ու գաւառների միջև։ Պատրիարքարանը հեռագիրներով յանձնարարեց ցոյց տալ չէզոք թեկնածուների, խորհրդակցութեամբ քաղաքական կուսակցութիւնների և կրօնական յարանուանութիւնների, իսկ գաւառական առաջնորդարանները, գտնվելով մեծ մասամբ դաշնակցականների ձեռքում և առանց կարևորութիւն տալու միւս կուսակցութիւնների և յարանուանութիւնների խորհրդին, ցոյց տուին դաշնակցական թեկնածուների, ինչպէս որ Վանն էլ ցոյց տուեց Վռամեանին ու Փափազեանին. իսկ Դաշնակցութեան տեղական կոմիտէները, հիմնվելով ապակենտրոնացման իրաւունքների վրա, յայտարարեցին, որ իրանք մասնակցում են ընտրութիւններին՝ ունենալով իրանց կուսակցական թեկնածուներին։ Այս հեռացումն անշուշտ առանց կենտրոնի խորհրդի չէր, թէև նրանք Կ. Պոլսում շարունակում էին մնալ դարձեալ վարագոյրի ետևում։

Բայց երկար ժամանակ վարագոյրի ետև խաղալ կարելի չէր, ուստի մի գեղեցիկ օր էլ նրանք յանկարծ դուրս եկան բեմ ու յայտարարեցին, որ թողնում են ձեռնպահութիւնը ու մտնում են գործօն դերում. նոյնը արին նաև միւս կուսակցութիւնները, և այս անգամ էլ սկսվեց աթոռի կռիւ յայտնի ու բացարձակ կերպով, թէև վարագոյրի ետևումն էլ՝ նոյն կռիւն էր լինում։

Պատրիարքը, տեսնելով որ համաձայնութիւն աթոռների շուրջ չէ գոյանում, ինքը բաժանեց աթոռներն ու Վանի համար ցոյց տուեց դաշն. Փաստրմաճեանին, սահմ.-ռամկ. Վահան Մալէզեանին։ Պատրիարքը այդ ցուցմունքը արել է ինքնագլուխ՝ առանց կուսակցութիւնների համաձայնութեան։ Այս հեռագիրը ի հարկէ թելադրանք էր գաւառներին՝ չընդունել պատրիարքարանի որոշումը. իսկ դաշնակ. քաղաքական ժողովն էլ շտապեց հեռագրով բողոք տալ և յայտնել, որ վանեցին Փաստրմաճեանին ու Մալէզեանին չէ ճանաչում, ուստի ընտրութիւնների ժամանակ նրանք աջակցելու շանսեր չունեն, ու նորից պնդեց Վռամեանի ու Փափազեանի թեկնածութեան վրա։

Կռիւն այս վիճակումն է ահա. Կ. Պոլսում կուսակցութիւնների միջև համաձայնութիւնը խզվել է, իսկ Դաշնակցութեան տեղական կոմիտէն հրահանգ է ստացել գործել անկախ միւս կուսակցութիւններից։ Այդպիսի պարագայում, ասում են, Սահմ.-Ռամկ. և Հնչակեան կուսակցութիւններն որոշել են ձեռնպահ մնալ՝ չուզելով ընտրական պայքարի մտնել միւս կուսակցութեան հետ, որ ամեն գնով աջողութիւն ուզում է ձեռք բերել, առանց խտրութիւն դնելու միջոցների մէջ։ Թէև այդ ձեռնպահութիւնը շատ էլ ի դէպ չէ մեր կարծիքով, նայած որ նոյն երկրորդ կարգի ընտրողները (միւնթէխիբը սանի), որոնք ընտրում են օսմ. պարլամենտի անդամին, նրանք նոյնպէս կատարում են նահանգային ժողովի անդամների ընտրութիւնը, որ հայկական բարենորոգումների ընդունված հիմնադրով՝ Վանի նահանգում լինելու է կէս առ կէս հայերից։ Ձեռնպահութիւնը այս պարագայում պիտի նշանակէ ինքնասպանութիւն, որ չը պէտք է թոյլ տային իրանց գործել երկու ընդդիմադիր կուսակցութիւնները, եթէ միւս կուսակցութեան հետ համաձայնութիւնը անհնար են համարում։

Մարակ

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Ֆրանսիական պարլամենտական ընտրութիւններին այս անգամ եւս յաղթութիւնը տարան սօցիալիստները, որոնց թեկնածուներ Ժան Ժօրէսը, Ժիլ Գէդը և Էդուարդ Վայանը ընտրվեցին մի ու կէս միլիօն ձայներով։ «Humanité»-ն հաւատացնում է, որ սօցիալիստները շահեցին 55,000 ձայն։ Սօցիալիստները պաշտպանելու են ներկայ դեմօկրատիկ կաբինէտը։ Ընտրութիւններին ի միջի այլոց մասնակցեց անձամբ պրեզիդէնտ Պուանկարէն, և սևացաւ յայտնի գրող ու բանաստեղծ Ժան Րիպշէնը։ Ընտրութիւններին մասնակցեցին նաև, ի հարկէ առանց գործնական հետևանքի, ֆրանսիացի կանայք։

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ Թիւրքաց կառավարութիւնը ամեն միջոց ձեռք է առնում կանգնեցնելու Թրակիայից սկսված յունական արտագաղթը։ Իբր թէ նոյնիսկ ոյժով յետ են պահում յոյներին գաղթելուց։ Թիւրքական տեղեկութիւնների համաձայն, արտագաղթը արդէն դադարել է։

◆ Պարիզից հեռագրում են, որ գրող Գաբրիէլ դ՚Աննունցիօյի առողջական դրութիւնը դէպի լաւն է գնում։

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ տիեզերական պատրիարքը սպառնում է փակել բոլոր եկեղեցական դպրոցները Թիւրքիայում, եթէ յոյների հալածանքը շարունակվի։

◆ Կ. Պօլիսից «Рус. Сл.»-ին հեռագրում են, որ Հէջասում ապստամբվել են 400 արաբ զինուոր, որոնց միացել են բազմաթիւ արաբներ։ Դամասկոսից ուղարկվել են երեք գունդ՝ ապստամբութիւնը զսպելու համար։ Առ հասարակ դրութիւնը Արաբիայում շատ անորոշ է։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ո՞վ է ամենահարուստ մարդը աշխարհում.—Միացեալ-Նահանգների եկամտային հարկին վերաբերող նոր օրէնքով բոլոր ամերիկացի միլիօնատէրերը պարտաւոր են ցոյց տալ իրանց տարեկան եկամուտը։ Մեծ սենսացիա առաջ բերեց «նաւթային արքայ» Րօկֆէլլէրի յայտարարութիւնը այն մասին, թէ նրա տարեկան եկամուտը վերջին տարին հասաւ 500 միլիօն ֆրանկի։

Եւրօպայում բնակվող ամերիկացի հարուստները, որոնք ցոյց են տալիս իրանց եկամուտները պակասեցված, այլ ոչ թէ աւելացված չափով, չէին կամենում հաւատալ, որ Ջօն Րօկֆէլլէրը ինքն իր տարեկան եկամուտը գնահատել է կէս միլիարդ ֆրանկ։

Այդ առիթով եւրօպական մամուլի մի քանի օրգաններում երևացին մի շարք հետաքրքրական տեղեկութիւններ ամերիկացի միլիարդէրի մասին։ Լրագիրներում սկսեցին տպվել ընդդիմախօսութիւններ, թէ ով է աւելի հարուստ. Վանդէրբիլտը, Աստօրը, Մօրգանը, Մակայը, Գուլդը թէ Րօկֆէլլէրը։ Այս կռիւսոնները Րօկֆէլլէրի հարստութիւնը գնահատեցին 500 միլիօն դոլլար, այսինքն յամենայն դէպս մօտ 3 միլիարդ ֆրանկ։ Եթէ ուշադրութեան առնենք նրա ցոյց տուած տարեկան եկամուտը, կը ստացվի ամեն տարի հասոյթ նրա հարստութիւնից տարեկան 50 տոկոս, որ կասկած է յարուցանում միւս հարուստների մէջ։

Ամերիկական հարստութիւնների գնահատութիւնը դժուար հաշւելի է. դրան խանգարում են ոչ միայն Ամերիկայում գոյութիւն ունեցող ամեն ինչի փքուն գները, այլ և արդիւնաբերութեան արագ փոփոխութիւնը ամերիկեան կեանքում։

Աշխարհիս ամենահարուստների թւում Րօկֆէլլէրը գրաւում է միայն 5-րդ տեղը։ Առաջին տեղը գրաւում է մի ինչ-որ հնդիկ։ Բացի դրանից՝ Րօկֆէլլէրից աւելի հարուստ է ոչ միայն Րօտշիլդների տունը, այլ և աւստրիացի իշխան Շվարցէնբէրգը, որի հարուստ ընդարձակ հողաբաժինները գտնըվում են Չեխիայի ամենալաւ մասում։

Վիրաբոյժի մտացրութիւնը.—Լօրդ Կիլմէրը պառկեց մի նշանաւոր վիրաբոյժի մասնաւոր հիւանդանոցը, ուր և վիրաբոյժը բոլէապէս կատարեց անդամահատութիւնը։ Երբ հիւանդը զարթնեց և իմացաւ, որ ամեն ինչ վերջացել է, թեթև շունչ քաշեց և սկսեց խօսել իր սենեակում պառկած երկու հիւանդների հետ։

— Ձեզ դեռ անդամահատութեան չե՞ն ենթարկել,—ցաւակցելով հարցրեց նրանց լօրդը։

— Ո՛հ,—եղաւ պատասխանը։—Ինձ արդէն երկու անգամ են արել, այժմ անելու են երրորդ անգամ։

— Ինչո՞ւ,—հարցրեց զարմացած լօրդը, անհանգստանալով։

— Բա՜ս ի՞նչ. առաջին անգամ անդամահատողը մոռացաւ իմ ստամոքսի մէջ ունելիքը։ Հարկ եղաւ կրկնել։ Երկրորդ անգամ նա հանեց ունելիքը և մոռացաւ մկրատը։ Այժմ պէտք է մկրատը հանեն և ով գիտէ մի նոր բան գնեն։

Այդ րօպէին սենեակ ներս վազեց աղմուկով գլուխը կորցրած վիրաբոյժը՝ գոչելով.

— Պարոններ, չէ՞ք տեսել, արդեօք, իմ ոսկեայ պենսնէն։

Լօրդը ուշաթափվեց...

Խմբագիր-հրատարակիչ՝

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ

Կ ՐԵՄ ԱՉԻՄԻ

ՄԵՏԱՄՈՐՖՕԶԱ

Միակ ճանաչվածը ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ կանանց կողմից։ Անպայման արմատապէս հեռացնում է երեսի բծիկները, բշտիկները, մուները, պրուածքները, կնճիռները և այլ դէֆէկտները։



(П. 44116) 4—2

КАХЕТИНСКІЯ ВИНА

Т-ва КАХЕТИНСКИХЪ САДОВЛАДѢЛЬЦЕВЪ

„Аллаверды"

ТИФЛИСЪ

ПУШКИНСК. УЛ. КАРАВАНЪ-САРАЙ ТАМАМШЕВЫХЪ

ТЕЛЕФОНЪ 17-61

(Ա.Հ.Կ.) 10—1

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեանի

Հիմնված 1880 Թ.

(Գուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։

Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին ջղային և երեխայոց հիւանդութ.։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։

Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—10—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հիւ.։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՑԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

1. 0-37

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

ՓՈԽԱԴՐՎԵՑ նոր բնակարան Սօլօլա կում, Բէբուտօվսկայա փող. № 38.

Ներքին և երեխաների հիւանդ., մասնագէտ ստամոքսային և աղիքային հիւանդ.։ Էլեկտրօտէրապիա։ Ընդունելութիւնը առ. ժամը 10—11-ը և երեկ. ժամը 5—7-ը։ Տէլէֆօն № 388.

(ա. օ.) 112. 100—49

ՀՕՆՕՐԲԷԻ (ՏՐԻՊՊԵՐ) ԴԵՄ

ՆՈՐ-ՄԻՋՈՑ

„SALO—ՊԻՉԻԼԻՆ"

ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ, համարվում է իբրև հասատուն միջոց։ Գործադրելու ձեռնարկը կցվում է արկղիկին։ Իսկականը մետաղեայ արկղիներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։ Միաժամանակ յաւ է ներգործում թէ սուր եւ թէ յարատեւ բնոյթ ունեցող դէպքերում եւ կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայամառ ընթացքը։

ՊԱՀԵՍՏԸ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека В. Конгейма.

Վաճառվում է բոլոր դեղատներում և դեղավաճառ խանութներում։

Salo—ՊԻՉԻԼԻՆ Salo—ՊԻՉԻԼԻՆ Salo—ՊԻՉԻԼԻՆ

(Կ.) (П. 57789) 37-1

Մեղմիկ, որպէս գարնան ծաղկանց.

Հստակէ, որպէս հարաւային մայիսը.

Քնքոյշ եւ սիւակոն հոտ.

ՕԴԵԿՈԼՈՆ, ԴՈՒԽԻ, ՍԱՊՈՆ

ԼԱՆԴԻՇ

Ընկ. Ս. Չեպելեվեցկի եւ Որդիք

ՄՕՍԿՎԱ

(М. 137896) 1—1

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում

վաճառվում են հետևեալ գրքերը.

ԽԱՏԻՍԵԱՆ «Փեսայ ոսկեղէն» վէպ գ. 50 կ.

ՆՈՅՆ «Նոր ճանապարհի վրա» գ. 1 ր.—

ԱՀԱՐՈՆԵԱՆ. «Կեանքի վէպը» . . . —75 կ.

ՆՈՅՆ «Անդունդը» . . . —40 կ.

ՀՐԱՏ. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ «Զօրապետ Տիգրանեան», ... —20 կ.

ՄՈՒՐԱՑԵԱՆ. «Հայ բողոքական ընտանիքը», ... —40 կ.

ՄՈԶՈՒՐԵԱՆ. «Հայրենի աւերակները» 20 կ.

ԵՍԱՅԵԱՆ. «Փորձանքների առձեռն բժշկարան» . . . . . —30 կ.

ԼՈՒԽՄԱՆՕՎ. «Նապօլէօնի մահը», դրամա 1 գործ. . . . . —10 կ.

ՇԻՄԿԵՎԻՉ. «Հայրեր և զաւակներ» —50 կ.

Օտար քաղաքներից դիմել՝ Въ Тифлисъ, Центральная книжная торговля.

351. 1—1

Փականա-Մեխանիկակ.

ԱՐՀԵՍՏԱՆՈՑ



ՉԱՅՐՎՈՂ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ

ՎԵՐՆԵՐ ՊՓԵՅԼ

Վօկզալնայա փ. № 3.

(օ.մ.) 100. 100—27

Ս. ԱՒԵՏԵԱՑ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ (Ջգրաշէն) եկեղեցու համար հարկաւոր են

ԼԱՒ ՁԱՅՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՒ ԳՐԱԳԷՏ

ԵՐԵՔ ՏԻՐԱՑՈՒՆԵՐ

Ցանկացողները թող դիմեն առանձին խընդրագրով ծխական հոգաբարձութեան։

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

(ա.օ.) 337. 3—3

Խնդրում ենք մերժել կեղծումները և ամեն տեսակ նմանողութիւնները և պահանջել միայն իսկական, ռուսական մաքսատնային արձէժ կնիքով,

ՄՈՄԵՐ

☛ ԱՆՈՒՉՕԼ ☚

ԳԵԴԵԿԷ և ԸՆԿ.

Առաջարկվում է որպէս շուտափոյթ, յարմար և ցաւեր չը պատճառող միջոց

ՄԱՅԱՍԻԼԻ ԴԷՄ

Այդ փորձված, բարերար ազդեցութիւն թողնող միջոցը ճանաչված է բժիշկների կողմից որպէս ամենալաւը։ ԳԻՆԸ 1 ր. 75 կ.։

Վաճառվում է դեղատներում եւ դեղավաճառ խանութներում։

Ներկայացուցիչ Ռուսաստանում

Պրօֆ. Է. ԻՒՐԳԷՆՍ։

Վօլխօնկա, Մոսկվա։

(М. 9225) 12—4

Լոյս տեսաւ

«ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ»

պարզ և հասկանալի լեզուով ամեն մարդու համար։ Անհրաժեշտ է մանաւանդ գաւառացիներին, որտեղ չը կայ բժիշկ և դեղատուն։ Ամեն տեսակ պատահական փորձանքներ և նրանց օգնելը ամենահեշտ միջոցներով։ Դեղարանով և բացատրութիւններով։ Գինը 30 կ.։ Ծախվում է նաև—«Վեներական ախտերի եւ ծածուկ ցաւերի բժշկարան», նկարներով, բազմաթիւ բեչէպտներով և խորհուրդներով։ Գինը 50 կ.։ «Ծիծաղի ակճոր», անէկդօտներ։ Գինը 20 կ.։ «Գնիկարմատի շալվարը», վօդէվիլ։ Գինը 20 կ.։ «Րաֆֆիի» կենսագր. պատկերով։ Գինը 10 կ.։ «Մեհնոյն դագաղում» պատմուածք։ Գինը 7 կ.։ Դիմել Թիֆլիս, գրավաճառներին, և ինձ՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медиц. фельдшеру А. Г. ЕСАЯНЦУ. Գրքերի գինը և ճանապարհի ծախսի համար 17 կ. մարկաներով առաջուց ուղարկել։

(հ. կ.) 327. 100—3

ՉՐԻ

«ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԲԵՄԸ» անուն կրօնական թերթին առաջին 4 թիւերը, որոնք աստուածաբանական հիմնական ուսուցմանց շուրջ օգտակար լուսաբանութիւններ կուտան, ու կը քօղազերծեն քրիստոնէութեան մէջ խաւար դարերէն ի վեր մուտք գտած անհեթեթ վարդապետութիւնները։ ՉՐԻ կը ղրկուին ամէն անոնց, որոնք քարտով մը կը դիմեն հետեւեալ հասցէին՝ J. Narlian. 105 Pleasant st. BROCKTON, Mass. U. S. A.

(օ. մ.) 331. 3—3

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Նախկին օրդինատօր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմէօնօվսկայա փող., № 18 (Վօրօնցօվի արձանի մօտ) առանձնապէս հիւանդների համար յարմարեցված բնակարանում։ Բժշկի բնակարան Սեմէօնօվսկայա, № 16.

(չ.ու.կ.) 804. 100—81

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Մասնագէտ սիֆիլիս, (ներարկումն 606 եւ 914-ով) միզասեռական, վեներական եւ կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։

Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։։

լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։

ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.։

Սօլօլակ, Բէբուտօվսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչա փող.), տէլէֆօն 11—75.

(չ. կ.) 785. 100—65

ԱԿՑ. ԸՆԿ. Тифлис. Метал. Заводъ

Ինժենէր Գ. Զ. Եարալեան և Ընկ.

Թիֆլիս, Կվիրիլսկայա, 9, սեփ. տ.

Տնօրէնի տէլէֆօն № 9, Կառավարչի բնակարան 14—78.

ԳՈՐԾԱՐԱՆԸ ՍՏԱՆՁՆՈՒՄ Է ԼՐԻՒ ՍԱՐՔԱՒՈՐՈՒՄՆ

Գիդրօ-շոգե-նաւթա-էլեքտր. կայարանների՝ առանձին աւտօմատիկ յարմարութիւններով, որոնք ազատում են կայարանների վերաբերմամբ աններելիք հսկողութիւններից։ Ջրհան, սառցային, սառուց պատրաստող, փոշեմաքրիչ, ջրաբաշխական կայարանների։ Վերանորոգումն և սարքաւորումն ջրաղացների, փայտասղոցարանի, բամբակազտիչ, ձիթահան և ալիւր պատրաստող գործարանների։ Կատարելագործված վերելակների՝ մարդկանց և ապրանքների համար։ Կառուցում է—շարժիչներ և մեքենաներ բոլոր տեսակի տեխնիկ. և գիւղատնտես. նպատակների համար։ Կատարում է—ամեն տեսակ կաթսային, կամուրջային և այլ մետաղային աշխատանքներ։ Պատրաստում է—արդատահմանեան ֆիրմաների նորագոյն ձևերով չքեղ դարպասներ, ցանկապատներ, պատշգամբներ, բակեր և այլն։ Նախագծեր և նախահաշիւներ բոլոր մատնանշված աշխատանքների համար։

(Կ.) 175. 25—4



ՄԻ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿ ՀԻՊՆՕՏԻԶՄ ԵՒ ՆՈՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՌԱՆՑ ՈՒՍՈՒՑՉԻ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԵՔԵՐՋԵԱՆԻ

Այս նոր ձեռնարկը կոչվում է

«ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄՏՔԻ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԿԱՄ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ»

Այս նոր ձեռնարկով ամեն ոք, ով հայերէն լեզուին ծանօթ է, կարող է սովորել հիպնօզացնել, ներշնչել և սովորել նոր-հոգեբանութիւն, և գործադրել նրան իր ամենօրեայ գործերում։ Այս նոր ձեռնարկի արժէքի և ուրիշ բացատրութիւնների համար պիտի դիմել նամակով հետևեալ հասցէով.

Ռուսաստանից—Арутюну Шекерджянъ, Вельяминовская ул. № 22 Тифлисъ. Արտասահմանից—Harouiun Shekerjian, 22 Weliaminovskaya, Tiflis, Caucasus, Russia.

(Կ.) 193. 25—7



ՆՄՈՒՇՆԵՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Նիկօլայոս I կայսեր քաղաքացիական ճարտարապետների ինստիտուտի պրօֆ. Գ. Դ. Գրիմ մի խմբագրութեամբ։ —◆— Կազմեցին

Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ և Ռ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ

Այս հրատարակութիւնը լոյս է տեսնում առանձին սէրիաներով, իւրաքանչիւրում մօտ 50 լուսատիպ-տախտակ (39×29 սանտ. մեծութ.) պատրաստած Ռ. Գոլիկէ և Ա. Վիլբորգ լուսատիպ-գործարաններում (Պետերբուրգում) ռուսերէն, հայերէն և ֆրանսերէն հակիրճ բացատրութիւններով։

Իւրաքանչիւր սէրիան ներկայացնելու է մի ամբողջութիւն, իսկ բոլոր սէրիաները միասին պատկերացնելու են հայկական հին ճարտարապետութիւնն իր բոլոր նշանաւոր կոթողներով։

Տպագրվում է միայն 300 օրինակ։ Լոյս է տեսել առաջին սէրիան, բաղկացած 50 տախտակից, փոքրիկ բնագրով և V—XVIII դարերի հետևեալ վայրերի յիշատակարաններից. Հաղբատի, Սանահնի, Վաղարշապատի (Էջմիածնի, Գայիանէ, Հռիփսիմէ, Շողակաթ), Ուզունլար, Մօղնու և Աշտարակի։

1-ին սէրիայի գինն է 14 ր., աղնիւ թղթի վրա՝ 24 ր.։

Դիմել—Рубену Мартиросяну. Тифлисъ, Мадатовская № 7.

(Կ.) 256. 5-5

„ԳԻՐ" գրախանութում վաճառվում է

Լինչ. «Հայաստան» (պատկերազարդ) Ա. հատ.	2 ր. 50 կ.
Ֆէրէալ. «Հաւատաքննական գաղտնիքները» (պատկերազարդ). . .	2 ր. 50 կ.
Բրէշկօվսկի. «Շղթանէլի տակ և ուրիշ պատմուածքներ». . .	1 ր.
Շիրվանզադէ. «Մատնիչը».	35 կ.
Թրամար. «Ուղեցոյց ընտանեկան երջանկութեան». . . .	1 ր.
Ակնունի. «Մեծ իդէալիստը» (Պրէսսանսէ).	10 կ.
Եսայեան. «Փորձանքների առձեռն բժշկարան»	30 կ.
Յովհաննիսեան. «Բանաստեղծութիւններ».	1 ր. 50 կ.
» »	15 կ.
Թումանեան. »	1 ր.
Վահան Տէրեան. »	1 ր.
Իսահակեան. »	1 ր.
Մանուէլեան. » . . . . I և II.	90 կ.
Ցակոբեան. »	50 կ.
Դէմիրճեան. »	50 կ.
Սթաբէկեան. »	50 կ.
Տիգրանեան. »	50 կ.
Ադա-Նեգրի. »	50 կ.
Կուրղինեան. «Արշալոյսի ղօղանջները (Բանաստեղծութիւններ) I պր.	30 կ.
Քաջազնունի. «Հայ բանաստեղծները» (Արևելեան բարբառ). . .	65 կ.
Վարդանեան. «Լուսաբացի ծաղիկներ» (Բանաստեղծութիւններ). .	25 կ.
Մովսիսեան. «Մրմունջներ» (Բանաստեղծութիւններ). . . .	25 կ.
Սիամանթօ. «Ամբողջական գործը» (Բանաստեղծութիւններ). . .	2 ր. 70 կ.
Զօպանեան. «Նահապետ Քուչակի Դիվանը».	1 ր. 50 կ.
» «Նաղաշ Յովնաթան աշուղը և Յովնաթան Յովնաթանեան նկարիչը».	1 ր. 50 կ.
» «Հայ էջեր».	2 ր. 50 կ.
Անդերսէն. «Սոխակի երգը». . . . -	01 կ.
Լագերլէօֆ. «Կարմրավզիկը».	01 կ.
Ռոստոմեանց. «Գործնական խոհարարական դասագիրք», երկրորդ տպագր.	75 կ.

Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ «ГИРЪ». (Կ.) 334. 2—2

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է Թիֆլիսում միակ ռուսերէն լեզուով լոյս տեսնող, ԱՄԵՆԻՑ ԱՆՀՐԱԺԵՇՏ, բժշկական ամսագիր

„ЖУРНАЛЪ-ЛЕЧЕБНИКЪ"-ի

1914 Թ. բաժանորդագրութիւնը.

Ամսագրի նպատակն է՝ հիւանդութիւնների նախազգուշացումն և առողջութեան պահպանումն։

Ամսագրի մէջ, յայտնի բժիշկների աջակցութեամբ, պարզ և հասկանալի լեզուով բացատրվում է այն բոլորը, ինչ որ անհրաժեշտ է առողջութեան և կեանքի երկարացման համար։

Բաժանորդագինն է ամբողջ տարվայ համար միայն «օրացոյց-բժշկարան» պրէմիայով 1 ր., (վերադիր վճ. 1 ր. 20 կ.), իսկ 3 ՊՐԷՄԻԱՅՈՎ 2 ր.

1-ին պրեմիան պատի գեղեցիկ «Օրացոյց բժշկարան» 1914 Թ., իսկ 2-րդ և 3-րդ պրէմիան բաժանորդների ցանկութեան և ընտրութեան համաձայն կուղարկվեն 2 հատ հետևեալ գրքերից. 1) Домашній лечебникъ (առանձին արժէ 1 ր.), 2) Грѣхи молодости (лечебникъ секр. болѣзней 1 р.), 3) Лечебникъ домашнихъ животныхъ (1 р. 25 к.), 4) Искусственное безплодіе (1 р. 25 к.), 5) Самоучитель гипнотизма (2 р.), 6) (Полный дѣловой письмовникъ (1 р.), 7) Поваренная книга для хозяекъ (1 р.). Պրէմիաները պատրաստ են և կուղարկվեն բոլորովին ձրի լոյս տեսած համարների հետ՝ բաժանորդագինը ստանալուց անմիջապէս։

Բաժանորդագրվել կարելի է և վերադիր վճարով՝ (налож. плат.) 20 կ. աւելի արժէքով, այսինքն բաժանորդները վճարում են պօստին պրեմիաները ստանալուց 2 ր. 20 կ.։

Հասցէն՝ Тифлисъ—М., Вознесенская ул. № 8, главная к-ра ред. „Журналъ-Лечебникъ". Թիֆլիսում բաժանորդագրութիւնը ընդունվում է նոյնպէս և Կենտրոնական գրավաճառանոցում։

(հ. կ.) 249. 10—10

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный